

Այունյաց երկիր

www.syuniacyerkir.am

ԵՐԵՎԱՆԻ
13 ՄԱՅԻՍԻ 2014 թ. № 10 (318)

**Ո՛ր երկրի արևում
թախիծ կա այսֆան,
Ու այսֆան ներում՝
ն՛ր երկրի ներում...**

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

Ղեկավարին ժողովուրդը պետք է ընդունի

Հարցազրույց
«Համո Սահյան»
գիտանշակության
կենտրոնի նախագահ,
բանասիրության դոկտոր
Շչոբու Դավթյանի հետ

– Դուք եղել եք Սիսիանի շրջկոմի առաջին քարտուղարը, հետո «Խորհրդային Հայաստան» թերթի գլխավոր խմբագիրը, նաև բանասիրական գիտությունների դոկտոր եք: Լինելով պաշտոնյա, նաև մշակույթի ասպարեզում եք Ձեզ դրսևորել, Ձեզ հարգել են հասարակությունը եւ մտավորականը: Ըստ Ձեզ՝ ինչպիսի՞ն պետք է լինի իսկական ղեկավարը:

– Մարդն ինչ տեսակ պաշտոն էլ որ ունենա, եթե կապված չէ մշակույթի, գրականության հետ, ինքը լիարժեք ղեկավար չի կարող լինել: Ամենից առաջ մարդ պետք է լինես, ինտելեկտ ունենաս, որի միջոցով կարող ես նաև գյուղատնտեսությունն էլ ղեկավարել, որովհետև այդքան բարդ երեւոյթ չի ղեկավարելը, եթե լինես իսկական մարդ՝ քո ազգի մշակույթով թաթախված եւ քեզ զգաս ազգի իսկական գավակը: Ղեկավարին ժողովուրդը պետք է ընդունի, եթե չընդունեց որպես անձնավորություն, ոչինչ չի ստացվի, այսինքն՝ պիտի զգա, որ իր գլխին տեր կա, մարդ կա, որ իրենց մասին հոգում է, մտածում է իրենց խնդիրները լուծի, ամեն ինչը: Բացի դրանից, ժողովուրդը պետք է շոշափելիորեն զգա, պիտի տեսնի, որ իր գյուղը փոխվեց, ասֆալտապատվեց, գյուղում դպրոց, մանկապարտեզ, կապի հանգույց ու համալիրներ կառուցվեցին, այսինքն՝ այն ամենը, ինչը մարդու կենսամակարդակն է բարձրացնում, հենց դա զգաց՝ ղեկավարին կընդունի: Նախկինում պատկառանք կար, որովհետև գիտեին՝ ղեկավար կա, ով մտածում է իրենց մասին:

– Ձեր պարագայում ինչպե՞ս դա ստացվեց՝ համատեղել պաշտոնը ու մշակույթը, լինել սիրված եւ ընդունված:

– Դա ինքն իրեն չի ստացվում, ես ձգտում էի այն ժամանակ հանրապետության մշակութային, գրական վերնախափն բերել Սիսիան, որպեսզի ժողովուրդը շփվի ու զգա, թե ինքն ում հետ գործ ունի: Այդ իմաստով առաջինը Համո Սահյանն էր, քանի որ ինքը տեղացի էր, նրա հետ նաև մյուս գրողները՝ Վահագն Դավթյանը, Սերո Խանգաղյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, նաև Ռազմիկ Դավթյանը, Ռուբեն Հովսեփյանը, բացի գրողներից՝ Սոս Սարգսյանն էր, ում հետ երկար ժամանակ ընկերություն եմ արել, Սոսի «Կանչ» գրքում կա իմ այդ տարիների աշխատանքի մասին, որ այս մարդը մարդկանց մասին մտածելուց բացի, մտածում է նաև հոգեւոր միջավայր ստեղծելու մասին, որ ժողովուրդն այդ հոգեւոր տարածության մեջ լինի: Էլի ուրիշ մտավորական ու արվեստագետներ՝ քանդակագործ Արտաշես Հովսեփյանը, ով սիսիանցի էր, գեղանկարիչ Ջաքար Խաչատրյանը, այդպես շատերը: Այդ ամենն իր փոխազդեցությունն է ունենում, մեծերից սովորում ես, շփումը խորացնում է քո մտածողությունը, հայացքը: Այդ ամենի հետեւանքով Սիսիանի ժողովրդի մեջ կատարվեց հեղափոխության պես մի բան, այդ մեծերի շնորհիվ: ԷՏ 4



O tempora, o mores... Օ Զանգեզուր, օ Կյորես...

Նախաճաշական

Մայիսի 9-ին ավարտվեց Գորիսի քաղաքապետի թեկնածուների առաջադրումը, իսկ մայիսի 13-ին տեղի կունենա առաջադրված թեկնածուների գրանցում:

Գորիսի քաղաքապետի թեկնածու են առաջադրվել Վաչագան Աղունցը՝ «Հայքըմուղ-կոյուղի» ՓԲԸ Գորիսի տեղամասի պետ (առաջադրվել է ՀՀԿ-ի կողմից), Արա Բուդաղյա-

նը՝ «Կարարակն» ՓԲԸ տնօրեն (ինքնառաջադրում), Տիգրան Կարապետյանը՝ «Գամմա» ՓԲԸ տնօրեն (ինքնառաջադրում) եւ Հրայր Յոլյանը՝ «Շանի» ՍՊԸ տնօրեն (ինքնառաջադրում):

Գորիսյան նախընտրական գործընթացի վերաբերյալ արդեն իսկ կարելի է մի քանի արձանագրում կատարել:

Նախ՝ Գորիսում, հակառակ որոշ գուշակների, անմախաղեպ հանգիստ մթնոլորտ է: Եվ անհանգիստ լինելու համար, կարծեք, որեւէ պատճառ չկա: Տեղի ունեցող ամեն ինչ տեղա-

վորվում է նախընտրական տրամաբանության մեջ:

Երկրորդ՝ Գորիսի քաղաքային իշխանությունը 14 տարի ղեկավարած Նելսոն Ոսկանյանը չառաջադրեց իր թեկնածությունը, թեև կարող էր ներկա ընտրապայքարի ֆավորիտը լինել:

Երրորդ՝ առաջադրված թեկնածուներից յուրաքանչյուրն ունի նվիրյալների լուրջ թիվ, եւ արդեն իսկ նրանց եռամդուն աշխատանքը տեսանելի է: Դա թույլ է տալիս ասել՝ հունիսի 8-ին Գորիսում տեղի կունենա մաքուր ընտրություն, ՇՆՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՏ 2

Ի՞նչ է կատարվում Քաջարանի կոմբինատում

Ն Լեռնահայաստան

ՀՀ պետեկամուրների կոմիտեն վերջերս հրապարակել է ցանկ՝ ընթացիկ տնտեսական տարվա առաջին 1000 խոշոր հարկատուների եւ նրանց կողմից վճարված հարկերի ու տուրքերի մեծությունների:

Ըստ այդ տեղեկատվության՝ «Ջանգեզուրի ՊՍԿ» ՓԲ ընկերությունն այս տարվա 1-ին եռամսյակում պետությանը վճարել է 2 մլրդ 982 մլն 280 հազար 400 դրամ հարկ:

Լա՛վ ցուցանիշ է դա, թե՛ վատ: Պարզունակ եւ անմեղ այդ հարցին պատասխանելու համար հիշե՛նք՝ թե կոմբինատը որքան հարկ է վճարել նախորդ երկու տարվա նույն ժամանակաշրջա-

նում:

Այսպես՝ «ԶՊՄԿ» ՓԲԸ-ն 2013թ. առաջին եռամսյակում վճարել է 3 մլրդ 444 մլն 839 հազար 600 դրամ, իսկ 2012թ. առաջին եռամսյակում՝ 5 մլրդ 230 մլն 909 հազար 300 դրամ հարկ:

Բերված թվերը վկայում են, որ ընթացիկ տարվա 1-ին եռամսյակում Քաջարանի կոմբինատը 2013թ. նույն ժամանակի համեմատությամբ պետությանը պակաս է վճարել 462 մլն 557 հազար դրամ, 2012թ. նույն ժամանակի համեմատությամբ՝ 2 մլրդ 248 մլն 628 հազար 900 դրամ:

Ինչպես տեսնում եք՝ Քաջարանի կոմբինատում գործ ունենք իրավիճակի կտրուկ վատթարացման հետ:

Կոմբինատի ղեկավարներն ու նրանց սպա- ՇՆՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՏ 5



Մաքսիմ Հակոբյան, «ԶՊՄԿ» ՓԲԸ տնօրեն

Նարգազրոյց համարին

Համայնքները խոշորացնելուց առաջ կառավարությունը պետք է հարցնի բնակչության կարծիքը

Մեղրի քաղաքային համայնքի առջև ծառայած խնդիրների, ներկայումս ներքին ջրատար ցանցում կատարվող վերանորոգման աշխատանքների ու հետագա անելիքների մասին է գրույցը Մեղրու քաղաքապետ Արշավիր Հովհաննիսյանի հետ:



– Պարո՞ն Հովհաննիսյան, հարկ ենք համարում ես մեկ անգամ անդրադառնալ համայնքների խոշորացման վերաբերյալ Ձեր դիրքորոշմանը:

– Ճիշտն ասած, համայնքների խոշորացման հարցում իմ կարծիքը միանշանակ է. այն հատկապես Մեղրու տարածաշրջանին որևէ օգուտ չի կարող տալ: Մեղրին սահմանային քաղաք է, ես նրա դերն ու նշանակությունը կառավարությունը պետք է հստակ պատկերացնի: Բացի նրանից, որ այստեղ գյուղացին զբաղվում է գյուղատնտեսական աշխատանքներով՝ նա նախ և առաջ սահմանապահ զինվոր է: Մեր տարածաշրջանի գյուղերում պիտի վառվող

լույսեր ավելացնեն եւ ոչ թե նվազեցնեն: Հասկանալի է, որ համայնքների խոշորացմամբ տարեկան տնտեսվում է 83 մլն դրամ, բայց չէ՞ որ այդ գյուղական համայնքներում ապրում է 4500 մարդ: Գյուղացուն կտրելով հողից՝ նրան ակամայից դարձնում ենք սպառող, այդ դեպքում ո՞վ պետք է արտադրի, որ նա սպառի: Իսկ այն կարծիքը, որ գյուղում ավելի հեշտ է ապրել, չի պայմանավորվում գյուղացու կյանքի հեշտությամբ, քանի որ գյուղում միշտ էլ ընդհանուր է չարքաշ կյանքը: Հայաստանի Հանրապետության գյուղերի մեծ մասում համատարած աղքատություն ու չքավորություն է, պետք է ձգտեն դա վերացնել: Ես այն կարծիքին եմ, որ

կառավարությունը նախքան իր որոշումը կայացնելը պետք է ժողովրդից կարծիք հարցնի: Եթե այս պահին ասեն, որ լիովին համամիտ են համայնքների խոշորացման ծրագրին, համոզված եմ, կդառնան ժողովրդի թշնամին:

– Սյունիքի մարզի տարածաշրջանում արձանագրված եղանակային շեղումներն ինչպիսի՞ստ են տեսնանքներ ունեցան Մեղրի քաղաքի համար:

– Ցավալի է, բայց պետք է մտահոգությունն հայտնեն առ այն, որ ես չեմ պատկերացնում, թե այս տարի մեղրեցիներն ինչպես պիտի ապրի: Մեղրին, ճիշտ է, համարվում է քաղաքային համայնք, բայց բնակչությունը

մեծ մասամբ զբաղվում է այգեգործությամբ, մասնավորապես պտղաբուծությամբ: Եղանակային տատանումների հետևանքով այս տարի ծիրանի մասին կարող ենք մոռանալ, ինչպես նաև 60%-ով եւ ավելի ցրտահարվել են արքայանարինջը, թուզը: Միանգամից ցրտահարվել են արեւադարձային կուլտուրաներից գեյթունը, կիվին, մուշմուշը: Դժբախտաբար, դժվար է պատկերացնել, թե մարդիկ որտեղից եկանուտներ պիտի ստանան, բայց մեղրեցիները քչով բավարարվում են, մեկ մյուսին օգնելով՝ դուրս կգան ստեղծված վիճակից:

– Վնասի փոխհատուցման ուղղությամբ աշխատանք տարվո՞ւմ է:

– Ցրտահարությունից հետո այցելելով բնակիչներին՝ ծանոթացել ենք ստեղծված իրավիճակին: Վնասի չափը որոշվել է եւ ներկայացվել Սյունիքի մարզպետարանի համապատասխան վարչություն: Հուսով եմ, փոխհատուցում կլինի, բայց թե որքան, չեմ կարող ասել:

– Վերջին 1-2 տարում Մեղրու ոռոգման ջրի համակարգում որեւէ էական փոփոխություն արվե՞լ է, թե՞ ոչ:

– Մեղրի քաղաքի համար հնարավոր չէ առանձնացնել ոռոգման եւ խմելու ջրի ցանցերը, քանի որ խմելու ջուրը կախված է նրանից, թե ինչպես է կազմակերպվում ոռոգման աշխատանքը, այսինքն՝ քաղաքում կան հատվածներ, որտեղ բնակիչները, «Հայքմուղկոյուղի» ՓԲ ընկերության հետ պայմանագիր կնքելով, տարվա որոշ ամիսներին խմելու ջրից զեղչված սակագներով ոռոգման համար ջուր են ստանում: Բարեբախտաբար, պիտի նշեն, որ ներկայումս Մեղրիում լուծում է ստանում մի հարց, որ տարիներ շարունակ անհանգստացրել է բնակչությանը: Քաղաքի ջրամատակարարման համակարգը ծայրից ծայր փոխվում է, որի ծախսերը հոգում է «Հայքմուղկոյուղի» ՓԲ ընկերությունը: Նախնական պայմանավորվածության ՇՈՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՑ 5

O tempora, o mores... Օ՛ Զանգեզուր, օ՛ Կյորես...

ՍԿԻՉԲԸ ԷՑ 1

քանի որ կողմերն ի վիճակի կլինեն առանց դիտորդների էլ միմյանց հսկելու եւ վերահսկելու:

Մի իրողությունն էս՝ քաղաքական ուժերը, ՀՀ-ից բացի, որերորդ անգամ անտարբեր հայեցողի դեռում են: Չի բացառվում, սակայն, որ այդ ուժերն այս կամ այն թեկնածուին սատարելու քայլեր կձեռնարկեն:

Թեկնածուների առաջարկման փուլում, սակայն, ի սկզբանե մի ինտրիգ կար՝ երկրի բարձր իշխանությունը, ՀՀ-ն ո՞նք նախապատվություն կտան եւ կհամարեն իշխանության թեկնածու: Սուրբն Խաչատրյանի՞, թե՞ Մաքսիմ Հակոբյանի կողմից պաշտպանվող մարդուն: Եվ նախընտրական այդ հանգույցը լուծվեց հոգուտ Սուրբն Խաչատրյանի կողմից պաշտպանվող թեկնածուի:

Հանրապետության վարչապետ Հովիկ Աբրահամյանը, ըստ հավասար

տի տեղեկությունների, արդեն գրույց է ունեցել Վաչագան Աղունցի հետ եւ քննարկել ոչ միայն առաջիկա ընտրության, այլեւ համայնքի հետ կապված հարցեր:

Օլիգարխիկ կլանն ու նրան սպասարկող Սյունիքի մարզպետարանը, մինչդեռ, չեն շտապում ի դեկավարություն ընդունել քաղաքական որոշումը՝ մոռանալով, որ իրենք էլ քաղաքական նման մի որոշման ծնունդ են: Չի բացառվում նույնիսկ, դատելով վերջին օրերի իրադարձություններից, որ օլիգարխիկ կլանն ու նրա ենթակառուցվածքային մարզպետարանն ամեն ինչ կանեն երկրի ղեկավարության որոշման իրագործումը վիժեցնելու համար: Բանն այն է, որ անցած տասը ամսում Սյունիքի օրվա մարզպետը, Գորիսին ինտեգրվելու փոխարեն, ամեն ինչ արեց Գորիսից օտարված մնալու եւ այնտեղ «5-րդ շարասյուն» ստեղծելու համար: Նա հաջողություն չու-

նեցավ նաև ՀՀ-ի շրջանային ու մարզային կառույցները վերցնելու համար մղվող ճակատամարտում: Հիմա Գորիսը նվաճելու համար վերջին ճակատամարտն է սպասվում: Ըստ էության գորիսյան մարտադաշտում կվճռվի նաև հայր եւ որդի Հակոբյանների քաղաքական ճակատագիրը:

Այնպես որ առաջիկա օրերին ականատես կլինենք նորամուտ գարգացումների: Ուշագրավ կլինի հատկապես նախընտրական քարոզչությունը:

Մոտ 16 հազար ընտրող ունեցող Գորիսում քվեարկությանը կմասնակցի ընտրողների գրեթե 50 տոկոսը: Հիմա այդ ընտրողներից յուրաքանչյուրի համար պայքարի ժամանակն է: Այդ պայքարում, ըստ էության, առաջնայնություն չեն ունենա թեկնածուների ծրագրերի մրցակցությունը, գաղափարական պայքարը, միջկուսակցական կռիվը...

«Սյունյաց երկիրը» պատրաստ է իր էջերը տրամադրել թեկնածուներից յուրաքանչյուրի գովազդային նյութերին:

Հ.Գ. Թեկնածուներից յուրաքանչյուրը, անշուշտ, ունի որոշակի

արժանիքներ: Եվ շատ բնական կլինի, եթե այս կամ այն թեկնածուի մասին դրական խոսքեր հնչեն: Սակայն շատ տարօրինակ է ու զավեշտական, երբ մարդիկ թեկնածուների մասին խոսելիս ոչ թե անձնական կարծիք են հայտնում, այլ խոսում են ամբողջ Գորիսի անունից՝ «Գորիսեցիները հակված են...», «Գորիսեցիների 80 տոկոսը...», «Գորիսեցիները կարծում են...» եւ այլն: Ըստ էության այդ մարդիկ ամաչում են իրենց անունից ու իրենց գոյությունից եւ ստիպված վկայակոչում են ամբողջ Գորիսի անունը: Ընտրողների ինչ-որ տոկոսների մասին խոսելուց առաջ հարցախոյզի պես մի բան անցկացնելիք գոնե: Առավել ողորմելի են դառնում նրանք, ովքեր մայրաքաղաքային իրենց պուճախներից սյունիքյան ծայտյալների ցանկությունն են շաղ տալիս օլիգարխիկ կլանի կողմից ֆինանսավորվող թերթերում ու կայքերում: Փառք ու պատիվ Գորիսին, որ այդ ամենն ընդունում է իրեն շուրջի, իսկ սեփական անունից ամաչողներին ու Գորիսի անունից խոսողներին ողորմելիներ ու թվականներ համարում:

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Լուրեր

Վ Մայիսի 3-ին ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Ջոն Դեֆերնն այցելեց Կապանի քաղաքապետարան եւ հանդիպեց քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի հետ: Դեսպանը ծանոթացավ արդեն մի քանի ամիս գործող՝ քաղաքացիների սպասարկման մեկ պատուհանի սկզբունքին, որն իրականացվել է «Քաունթերփարթ ինթերնեյշնլ» կազմակերպության հետ համագործակցության շնորհիվ: Քաղաքապետը տեղեկացրեց, որ մեկ տարվա ընթացքում ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հետ քաղաքում իրականացվել է չորս ծրագիր եւ մեկը դեռ պիտի իրականացվի (էլեկտրոնային գրադարանի ստեղծում):

Վ Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը մայիսի 5-ին հանդիպեց Կապանի թիվ 9 ավագ դպրոցի մի խումբ աշակերտների հետ: Վերջիններիս նախածնունդով մայիսի 1-ին Կապանում կազմակերպվել էր բողոքի ակցիա՝ ընդդեմ քաղաքի թիվ 6 ավտոբուսային երթուղու ուղեվարձի թանկացման: Դպրոցականները ներկայացրին իրենց մտահոգությունը՝ նշելով, որ ուղեվարձի թանկացման դեպքում սոցիալական ծանր պայմաններում ապրող իրենց ընկերները չեն կարող հաճախել դպրոց: Քաղաքապետը տեղեկացրեց, որ երթուղին սպասարկող «Լավ ընկեր» ՍՊԸ տնօրինությունը, ընդառաջելով մարզային եւ քաղաքային իշխանությունների առաջարկին, մինչեւ ուսումնական տարվա վերջը՝ հունիսի 5-ը, աշակերտների եւ ուսանողների համար թիվ 6 ավտոբուսային երթուղու ուղեվարձը կթողի անփոփոխ՝ 50 դրամ:

Վ Մայիսի 7-ին Կապանի արվեստի պետական թրվեջի մեծ դահլիճում տեղի ունեցավ համերգ թրվեջի ուսանողների, «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոնի դափնեկիրների մասնակցությամբ: Օրեր առաջ Գյումրիում կայացած 6-րդ մրցույթ-փառատոնից մրցանակներով վերադարձած թրվեջի «դաշնամուր» մասնագիտության ուսանողներ Մերի Պետրոսյանը եւ Արկադի Անդրեսայանը, ովքեր եւ հանդես եկան կատարումներով: Համերգին ելույթ ունեցավ նաև Գյումրու միջազգային 4-րդ մրցույթ-փառատոնի դափնեկիր եւ 3-րդ մրցանակակիր, Ֆլետայի դասարանի 1-ին կուրսի ուսանողուհի Լիա Գրիգորյանը, ով այս տարվա հունիսին կմասնակցի պատանի երաժիշտ-կատարողների «Նոր անուններ» 4-րդ միջազգային փառատոնին ու նվագախմբի հետ հանդես կգա Գյումրիում կայանալիք գալա համերգին, եւ քանոնի դասարանի 3-րդ կուրսի ուսանողուհի Մարիանա Գասպարյանը, ով հունիսին ելույթ կունենա Արցախում: Համերգը զեղեցիկ կատարումով եզրափակեցին «պարարվեստ» մասնագիտության ուսանողները:

Վ Մայիսի 7-ին Երեւանի Վազգեն Սարգսյանի անվան մարզադաշտում տեղի ունեցավ 2013-2014 թվականների մրցաշրջանի ֆուտբոլի Հայաստանի գավաթի խաղարկության եզրափակիչ հանդիպումը: Պատվավոր մրցանակը վիճարկեցին Երեւանի «Փյունիկն» ու Կապանի «Գանձասարը»: Կապանի թիմի համար դա միակ հնարավորությունն էր դուրս գալու եվրոպական մրցասպարեզ: Բացի այդ Կապանի «Գանձասարը» առաջին անգամ էր դուրս եկել գավաթի խաղարկության եզրափակիչ: Ցավով, միակ բանը, որ հաջողվեց «Գանձասարին», հաշվի տարբերությունը կրճատել էր. «Փյունիկը» հաղթեց 2-1 հաշվով եւ տիրացավ գավաթին:

ՍՈՒՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ. «Համայնքների խոշորացմամբ վերջնականապես կործանվելու են փոքր համայնքները»

Սահմանամերձ համայնքներ

Քաղաքագետներից մեկն է ասել. «Կայսրությունները կարկանդակների մասն ծայրերից են ուտվում»: Մեր սահմանամերձ գյուղերը հայտնի ասացվածքի համադրյալ փշրվում են՝ հայտնվելով քարտեզի երեսից ջնջվելու իրական վտանգի առջև: Մեղրու տարածաշրջանի Կուրիսը սահմանամերձ (ասել է թե՛ սահմանապահ եւ սահմանադուռ) ծերացող-մարվող համայնք է: 1970 թվականից հետո (գյուղի բնակչության թվաքանակի մասին տվյալներ կան

ըր ցանկացել են, որ ինքը ղեկավարի համայնքը: Քանի որ տվյալ պահին անգործ է եղել, համաձայնել է՝ կարծելով՝ հետո ավելի արժանավոր թեկնածու կհայտնվի: Բայց քանի որ թեկնածու չի հայտնվել, մինչ այժմ գյուղապետ է:

Ցավով է նշում, որ վերջին հիսուն տարում գյուղում նշանակալի որեւէ գործ չի արվել: Կնշանակի գյուղի հանդեպ անտարբեր են եղել թե՛ նախկին, թե՛ ներկա իշխանությունները: Բայց նշաններ կան, որ սալը տեղից կարող է շարժվել: Բանն այն է, որ տասնամյակներ շարունակ Ազարակի պղնձամուղիդեմա-յին կոմբինատը համայնքից հողեր է վարձակալել ընդերքօգտագործման նպատակով: Միայն վերջերս է փոխվել այդ հողերի կատեգորիան, ինչի շնորհիվ անցած տարվանից, որպես հողի վարձակալական վճար, կոմբինատից տարեկան ստանում են 15 մլն դրամ, ինչով արդեն կարելի է համայնքում որեւէ նշանակալի գործ ձեռնարկել: Նախկինում կոմբինատից տարեկան ստանում էին 500-700 հազար դրամ, որով ոչ մի վերք չէր բուծի: Գյուղապետը նշում է, որ նախ անհրաժեշտ է գյուղի կենտրոնից մինչեւ գերեզմանոց ընկած ճանապարհն ասֆալտապատել, նաեւ գերեզմանոցը ցանկապատել: Խնդրահարույց է ոռոգման ջուրը խողովակաշարով գյուղ հասցնելը: Սարից եկող ջուրը մինչ գյուղ է հասնում, մի մասը ծծվում է հողի մեջ, մի մասն էլ՝ գոլորշիանում: Մայր առուն գյուղովի ամեն գարնանամուտին մաքրում են, բայց, միեւնոյն է, ամռանը ոռոգման ջուրն այգի-բանջարանոցներ չի հասնում: Անհամեմատ լուծված է խմելու ջրի հարցը: Համայնքը խմելու ջուր է ստանում Ջվար-Ազարակ խողովակաշարից եւ Կուրիսից չորս կիլոմետր հեռու գտնվող աղբյուրից:

Ըստ «Ֆինանսական համահարթեցման մասին» օրենքի՝ Կուրիսը տարեկան ստանում է 3,5 մլն դրամ դոտացիա (լրավճար), այնքան, որքան նախատեսված է մինչեւ 300 բնակիչ ունեցող համայնքներին: Այս առիթով գյուղապետը մի համեմատություն արեց. պետությունից համայնքը ստանում է այնքան, որքան Ազարակի կոմբինատի «Բելազի» վարորդի տարեկան վաստակն է: Ինչպես ասում են մեկնաբանություններն ավելորդ են: Նաեւ տեղեկացանք, որ համայնքի սեփական եկամուտը 200 հազար դրամ է (եւս մի խոսում փաստ դատարկվող գյուղի մասին): Հատկացվող լրավճարը բավարարում է միայն գյուղապետարանի ծախսերը հոգալու համար: Կուրիսը նաեւ ազդակիր համայնք է, ինչի համար պիտի բնապահպանական վճար ստանա: Բայց բնապահպանական գումարներն ուղղվում են պետություն: Համայնքում բնապահպանությանը միտված ծրագիր պիտի կազմես, որը հաստատվելուց հետո միայն նախատեսված գումարը



Մեծ հայրենականում զոհված կուրիսեցիների հիշատակը հավերժացնող հուշարձանը

հատկացնում են: Իրողությունն այն է, որ մինչ այժմ համայնքը բնապահպանական գումար չի ստացել: Սուրիկ Գրիգորյանից ցանկացանք իմանալ կարծիք համայնքների խոշորացման եւ միջհամայնքային միավորումների ձեւավորման մասին, ըստ որի ընդհանուր վարչական սահման ունեցող համայնքները միավորվում են, ավելի ստույգ՝ փոքրերը ձուլվում են խոշորներին: Մեր գրուցակիցն այն համոզմանն է (եւ միանգամայն տրամաբանական), որ այդ քայլը վերջնականապես կործանելու է փոքր համայնքները (խոսքը բնակչության թվի մասին է): Ըստ նրա, միավորվելու դեպքում ներդրումներ արվելու են խոշոր համայնքներում անտեսելով փոքրերը: Մանավանդ իրենց սահմանամերձ

ապանոստաժելու եւ Ազարակ քաղաք տեղափոխելու նախագծմանախահաշվային փաստաթղթերի կազմման նպատակով: Ինչին հետեւել էր հնագետների կողմից եկեղեցու տարածքում պեղումներ կատարելը եւ պատմական հուշարձանի չափագրումը: Գյուղապետից հետաքրքրվեցինք, թե պատմական հուշարձանի տեղափոխման հարցն ինչ ընթացք է ստացել: Ս. Գրիգորյանի փոխանցմամբ՝ հնագետների գնալուց հետո ոչ մի նոր բան չի կատարվել, իսկ իր համոզմամբ՝ լավագույն տարբերակն է ամրացնել եկեղեցին, ճանապարհի հարթել դեպի տարածք, քանզի նրա ապանոստաժումից եւ տեղափոխումից հետո հազիվ թե հնարավոր լինի պահպանել կառույցի նախաստեղծ տեսքը, իսկ խնդրին լուծում տալու համար Ազարակում կառուցել նոր եկեղեցի:

Մարտի 30-ին եւ 31-ին տեղացած ծյունն ու դրան հաջորդած ցրտահարությունը քիչ վնաս են հասցրել համայնքին: Պարզվում է, որ առավել տուժել են հողերն ու ընկուզենին, նաեւ նորատունկ ցանքերը: Մանավանդ ընկույզի սպասված բերքը չի լինի: Բնական տարերքի հասցրած վնասի մասին տեղեկանք է ներկայացվել Սյունիքի մարզպետարանի գյուղվարչություն: Փոխհատուցում կլինի, թե՛ ոչ: Առայժմ դժվար է ասել: Հրապարակման մեջ նշեցինք, որ վերջին մի քանի տասնամյակում Կուրիսում նշանակալի ոչ մի բան չի արվել: Փոքրիկ շտկում պիտի մտցնենք: Մի քանի տարի է, ինչ բարեկարգ, ասֆալտապատ ճանապարհով գյուղը կապված է Քաջարան-Մեղրի մայրուղուն, որով էլ բռնեցինք տունդարձի ճամփան: Շրջադարձերից մեկուն սողանքն իր սեւ գործն արել էր: Մեր ուղեկիցը տեղեկացրեց, որ ճանապարհաշինարարները վերացրել էին սողանքի հետեւանքները, նույնը կրկնվել է: Ընդհանրապես Մեղրու տարածաշրջանի այդ կողմի գյուղերի (Կուրիս, Գուղենիս, Վահրավար) բնակիչները մեկ անգամ չէ, որ զոհունակությամբ են խոսում Մեղրու «ճանապարհների շինարարություն եւ շահագործում ձեռնարկություն» ՍՊ ընկերության (տնօրեն Ազատ Գասպարյան) ճանապարհաշինարարների մասին, որոնց շնորհիվ ոյուրին է դարձել հաղորդակցությունն արտաքին աշխարհի հետ:

ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵՆԱՆ

Ղեկավարին ժողովուրդը պետք է ընդունի

Հարցազրույց «Հանո Սահյան» գիտամշակութային կենտրոնի նախագահ, բանասիրության դոկտոր Շչորս Դավթյանի հետ

ՍԿԻՔԸ ԵՏ 1


Կենտրոնը համոզված է, որ դրանից հետո մի նպատակ ունենի միայն. իրենց երեխաներին կրթության տալ, եւ եկավ մի ժամանակ, որ Սիսիանը՝ բնակչության համեմատությամբ, բուհ ընդունվողների թվով հանրապետությունում առաջին տեղում էր: Իսկ մինչեւ իմ աշխատած տարիներն էլ ինչպե՞ս էր դառնում մյուսների համար:

– Ժամանակի հայացքն ավելի մշակութային էր, կայսրության շնչառությունն էր, որ մեզ պահում էր մտքի լայն շրջանառության մեջ: – Չէի ասի, թե այդքան մեծ էր այդ երեւոյթը, բայց Հայաստանում ավելի շատ էր, մյուս հանրապետությունները գնալով տեսել եմ, այդ ռիթմը զգացել եմ նաեւ մերթադրյալ հանրապետություններում, նրանք էլ, ինչպես Հայաստանում, շատ մեծ տեղ էին տալիս մշակութային երեւոյթներին: Կարեն Դեմիրճյանը, ում հետ ես 10 տարի աշխատել եմ, նույնպես մշակութային մեծ ներուժ ուներ եւ մեզ ստիպում էր մշակութային հետաքրքրվել: Կանչում էր, օրինակ, գարնանացանի մասին խորհրդակցության, վերջում ասում էր՝ այսօր Սունդուկյանի թատրոնում «Հացա-

վանի» պրեմիերան է, կգնաք նայե՛ք: Այն ժամանակ, օրինակ, եթե Հանո Սահյանը Սիսիանում էր, եւ Դեմիրճյանն այդ ճանապարհով պիտի անցներ, պիտի մտներ, Սահյանին տեսներ ու նոր գնար, որովհետեւ համարում էր իր ազգի մեծությունը, որի նկատմամբ պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել: Հիմա այդ բաները չկան, նաեւ չկա մեկը, որ այս ամենն իր տեղը դնի, եւ չեմ կարծում, որ այսպիսի խառնակիցներ վիճակներով լավ արդյունքի հասնենք: Ոչ միայն Դեմիրճյանը, նաեւ մյուսներն այդ հայացքն ունեին, նաեւ ասեմ, որ այն ժամանակ՝ բարեբախտաբար, եւ այսօրվա համար՝ դժբախտաբար, ճանապարհի չանցած նախարարներ չկային, բացի այդ, նրանց 60-70 տոկոսի մեջ գործունյա լինելուց նաեւ տաղանդ կար, եթե աշխատանքը չզուգակցվի տաղանդի հետ, բարձր արդյունք չի ունենա:

– Այսօր ի՞նչ կատարվեց, թվում էր՝ անկախություն ձեռք բերելուց հետո մենք ենք լինելու մեր գլխի տեղը, եւ ավելի է զարգանալու մշակութային, հասարակական կյանքը, ընդգծվելու են արժեքները, բայց ճիշտ հակառակ պատկերն ունենք:

– Ամենամեծ պատճառը ոչ միայն մշակույթի ասպարեզում, այլ նաեւ տնտեսության մեջ է, ոչինչ համակարգված չէ: Այսօր, օրինակ, հանրապետությունում կա 480 հազար հեկտար վարելահող, բայց դրանց կեսը



չի օգտագործվում, չկա մի այնպիսի համակարգ, որ այս գործընթացը լիարժեք կազմակերպի, իսկ նախկինում գոնե մի հեկտարը չէր կարող թողնել անմշակ: Ինչպես Հանո Սահյանն էր ասում՝ հողը մարդուց խռովել է, այսօր արդեն այդ հողի խռովվածությունը կա մարդուց: Այսօր ամեն ինչ խառնվել է իրար եւ մշակույթի ասպարեզում, եւ տնտեսության մեջ, եւ մարդկային կյանքում, դրանք համակարգումը, դասակարգումը չկա, ոչ մի բան իր տեղում կանոնակարգված չէ: Այսօր ինչ ուզում՝ անում են բոլոր ասպարեզներում, ճիշտն ու սխալը չես կարողանում իրարից տարբերել, նորից եմ կրկնում՝ այս ամենի պատճառն ընդհանուր համակարգի բացակայությունն է:

– Այս ամենով հանդերձ, այսօր մարդն արժեւորված չէ, քաղաքացին է անտեսված եւ իրեն զգում է ավելորդ ու բարոյալքված: Մենք մարդ արժե՞քն ենք կորցրել:

– Նախկինում մարդուն մեծ երեւոյթ էին վերագրում, շարքային քաղաքացուց մինչեւ մտավորական արժեւորում էին եւ դրանով հպարտանում էին: Նաեւ համայնք կար, մարդն ապրում էր այդ համայնքի կյանքով եւ իրեն ուժեղ էր զգում, այսօր այդ համայնքն էլ չկա, ինչո՞ւ,

որովհետեւ համայնքի ղեկավարը մի ջահել է, որը հեղինակություն չունի, կրթություն էլ չունի, բայց ընկերաբարեկամ ունի եւ ինքն է ընտրվում: Նախկինում Սիսիանի սովխոզ-կոլխոզի բոլոր ղեկավարները եղել են բարձրագույն կրթությամբ, նաեւ մյուս մասնագետները, իսկ հիմա այդ 40 գյուղից 6-ի ղեկավարն է բարձրագույն կրթությամբ: Ի՞նչ եղավ, անկախություն տվեցին, որ անզորազուրկ մարդկանց բերենք-դնենք ղեկավար, բայց Սիսիանի ամենափոքր գյուղի, որը 300 բնակիչ ունի, գյուղապետը քշում է 25-30 հազար դոլարանոց ջիպ: Ամեն ինչ անում են իրենց համար, բայց ժողովրդի լավ ապրելու մասին չեն մտածում:

– Այսօր ունենք քայքայված տնտեսություն, բարոյալքված հասարակություն եւ լայն թափով արտագաղթ: Չեր տարիների փորձից ու հեռավորությունից ինչպե՞ս եք գնահատում մեր այս վիճակը:

– Այսօր ես ամենամեծ ողբերգությունն արտագաղթն եմ համարում, արդեստությունից, մշակութային ջարդից, արժեքների կորստից ավելի վատը եւ ամենավատն արտագաղթն է: Եթե նախկինում դարոցի առաջին դասարան գնում էր, օրինակ, 100 հազար աշակերտ, այսօր գնում է

40 հազար, այդպես օր օրի մարդը պակասում է երկրի բոլոր ասպարեզներում: Պատճառներից մեկն էլ այն է, որ մեր ազգը մի քիչ էլ քոչելու սովորություն ունի, բայց, իհարկե, մարդն իր վաղվա օրվա նկատմամբ լավատեսորեն չի տրամադրված, դրա համար է գնում, ինքը չգիտի, թե վաղը ինչ է լինելու, իր երեխայի ապագան ինչ է լինելու: Եթե մի քիչ նյութապես ապահովված լինեն, ավելի կպակասի արտագաղթը: Իսկ երկրի ներսում էլ շերտիկով սնանկող վիճակ է, երեսանն ինչ-որ չափով կա, իսկ ծայրամասերը դատարկվում են, որովհետեւ հողը եկամուտ չի բերում, մարդը չի կարողանում ապրել, դրա համար էլ թողնում-գնում է: Մարդուն ասում են՝ կենսաթոշակի համար վճարիր, նա էլ ասում է՝ ես չեմ մնալու Հայաստանում, որ 20 տարի հետո ստանամ, ինչո՞ւ վճարեմ: Սերունդ չի աճում, երիտասարդներն ամուսնանալու, ընտանիք պահելու հնարավորություն չունեն, 1990 թվին ասում էինք՝ 15-20 տարուց լավ կլինի, արդեն 24 տարի է անցել, Ե՞րբ է լավ լինելու:

– Սեզ հիմա ի՞նչ է անհրաժեշտ, ի՞նչ կարելի է անել, որ իսկապես կյանքը լավ լինի, ինձ թվում է՝ կարող ենք, չէ՞:

– Ես այդքան մարգարեություն չունեմ, որ կարողանամ այդ ամենը գուշակել, բայց որ կարելի է ղեկավարել, դրանում ես համոզված եմ: Առաջինը՝ գյուղապետ, քաղաքապետ, մարզապետ պետք է այնպիսի մարդիկ դնեն, ովքեր մտածեն ժողովրդի մասին, մի փոփոխություն անեն, մի բան, ոչ թե մտածեն միայն իրենց գրպանի մասին, այս խնդիրը կա: Վերջապես կարծում եմ՝ եթե նստեն ու մտածեն, լուրջ գիտական ծրագրեր մշակեն, կարող են շատ բան փոխել, այսօր կարող են մեր ժողովրդի պոտենցիալ ուժն օգտագործել, նաեւ գիտական հիմնարկների կարողությունը, որոնք օտարված են: Համակարգ չկա, եթե մեր կյանքը համակարգվի, շատ բան կփոխվի երկրում:

ՖԵԼԻՔՍ ԵՐԿՍՈՒՅԱՆ
<http://www.hraparak.am/>
08.05.2014

ԷՋԵՐ ՍՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ առաքելական եկեղեցու բռնադատված հոգեւորականները 1930-38թթ.

ըստ ՊԱԿ-ի փաստաթղթերի

Հարված Արմենակ Մանուկյանի համանուն գրքից

Տեղ- Մարտիրոս (Տեղ-Գեորգ) քահանա Տեղ-Նովիսնիսյան
Տեղ-Գեորգ քահանա Վարդանյան (Տեղ-Մարգարյան)

Տեղ Հովհաննիսյան Տեղ-Մարտիրոս, նույնը Տեղ-Գեորգ Հովակիմի ծնվ. 1882թ. Գորիսի շրջանի Յայջի գյուղ: Ապրում է նույն հասցեով: Հողագործ, սերուն է հոգեւորականներից, պապը եղել է հոգեւորական, հայրը՝ հողագործ: Հեղափոխությունից հետո՝ քահանա, կուլակ-ծայնագուրկ, այժմ կոլխոզինիկ: Կրթությունը միջնակարգ: Հ-ի դաշնակցական կուս. անդամ: Ամուսնացած է, ունի 5 երեխա:

Տեղ-Մարտիրոս Տեղ-Հովհաննիսյանը ձերբակալվել է 1938թ. փետրվարի 14-ին:

Վարդանյան (Տեղ-Մարգարյան) Տեղ-Գեորգ Տեղ-Մարգարիս: Ծնվ. 1885թ. Գորիսի Յայջա գյուղում: Մինչ ձերբակալվելն ապրում է նույն հասցեով, քահանա, կրթությունը միջնակարգ, հնչակ, հետագայում դաշնակցական: Ամուսնացած է, ունի 2 երեխա:

Տեղ-Գեորգ Վարդանյան Տեղ-Մարգարյանը ձերբակալվել է 1938թ. փետրվարի 14-ին:

Մեղադրական եզրակացություն

Մեղադրվող Տեղ-Հովհաննիսյան Տեղ-Մարտիրոսը, Տեղ-Հովհաննիսյան Հակոբը, Տեղ-Մարգարյան Տեղ-Գեորգը եւ Թունյան Գասպարը մտնելով Յայջի գյուղի հ/ի դաշնակցական կազմակերպության մեջ, կազմակերպության մյուս անդամների հետ ակտիվորեն մասնակցել են 1905թ. ազգամիջյան կոտորածներին:

1905-06թթ. ակտիվ մասնակից են եղել աղբյուրաբանական բնակչության կոտորածին Ձանգեզուրում:

1920թ. Ձանգեզուրը գրավեցին բոլշեւիկները եւ հայտարարվեց խորհրդ. իշխանություն, դաշնակցական խմբապետ Լժոնեի եւ Յապոնի գլխավորությամբ նրանք, թիկունքում տարել են ակտիվ ընդհատակյա աշխատանք եւ կատարել դաշնակցական արկածախնդրություն վերակազմելով դաշնակցական կառավարությունը եւ մինչեւ Ձանգեզուրի վերջնական խորհրդայնացումը՝ 1921թ. ակտիվորեն կռվում էին բոլշեւիկների դեմ: Աշխույժ կապ էին պահպանում Իրանի դաշնակցական քաղաքական տարրերի հետ եւ տամուս էին հ/ի կազմակերպչական աշխատանք՝ խորհրդ. իշխանության դեմ զինված պայքարի նպատակով:

Հ/ի դաշնակցական այն տարրերը, որոնք գտնվում են ազատության մեջ, մեղադրյալի հետ ակտիվ կապերի մեջ են եղել մինչեւ նրա ձերբակալումը, եւ վարել է ակտիվ հակախորհրդային ագիտացիա եւ քայքայիչ աշխատանք ընդդեմ կոլխոզի...

1938թ. մարտի 3-ին ՀԽՍՀ ՆԳԿ-ի «Եռյակը» Տեղ-Հովհաննիսյանին եւ Վարդանյան Տեղ-Մարգարյանին դատապարտեց գնդակահարության:

ՀԽՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի 1957թ. դեկտեմբերի 20-ի որոշմամբ արդարացվել են:

Ներկայացնենք մի հատված Տեղ-Հովհաննիսյանի հարցաքննության արձանագրությունից, որը տեղի է ունեցել 1938թ. փետրվարի 18-ին:

Պրոց. - Պատմեք խորհրդայնացումից հետո Ձեր հ/ի կազմակերպության աշխատանքի մասին:

Պատ. - 1923թ. հակախորհրդային կրոնական պրոպագանդան ուժեղացնելու նպատակով, մեր դաշ. կազմակերպության առաջադրանքով ընդունեցի քահանայի հոգեւոր կոչում եւ սկսեցի հ/ի կրոնական ագիտացիա տանել: Չնայած նրան, որ 1928թ. ձեւակառուրեն իրաժարվեցի հոգեւոր կոչումից, որի մասին հայտարարվեց շրջանային «Կարմիր Ձանգեզուր» թերթում, բայց իմ հրաժարականի մասին ես չեմ հայտնել ոչ կենտրոնական մարմիններին, ոչ էլ մամուլին եւ, փաստորեն, կոչումից չեմ հրաժարվել, զբաղվել եմ հոգեւոր աշխատանքով մինչեւ 1934թ. ...

ՀՀ ԱԱՆ արխիվ ԿԳՖ գ. 4298

Տեղ-Հովհաննես Մակարի Տեղ-Հարությունյան, 1872թ. ծնված Սիսիանի շրջանի Անգեղակոթ գյուղում, Մելիքլար գյուղի բնակիչ, ով աճում է 1930թ., կուլակ-ծայնագուրկ,

1930թ. ձերբակալվել է Գ/ՊԲԿ կողմից հ/ի հեղափոխական դաշ. աշխատանքի համար եւ դատապարտվել 5 տարի համակենտրոնացման ճամբար, ամուսնացած է, ունի 6 երեխա:

Մեղադրական եզրակացություն

Տեղ-Հարությունյանը 1918-1919թթ. եղել է աղբյուրաբանական բնակչության ջարդի եւ կոլդակտի կազմակերպիչը: 1921թ. դաշ. արկածախնդրության ժամանակ կազմակերպում էր ջոկատներ եւ ուղարկում էր ճակատ բոլշեւիկների դեմ: 1903թ. մտել է հ/ի հեղափոխական ընդհատակյա դաշնակցական ապստամբական կազմակերպություն, վարում էր ակտիվ հ/ի խորհրդային աշխատանք, ինչի համար նույն տարի ձերբակալվել է եւ աքսորվել:

Աքսորից վերադառնալուց հետո՝ նորից կապվել է հ/ի հեղափոխական-դաշնակցական կազմակերպության հետ, քննադատում էր կուսակցության եւ իշխանությունների միջոցառումները եւ մինչեւ իր ձերբակալման օրը վարում էր հ/ի խորհրդային աշխատանք:

...Որպես հոգեւորական, վայելում էր մեծ հեղինակություն եւ ազդեցություն բնակչության մեջ: Այդ դրությունը նա օգտագործում էր կոլտնտեսությունը քայքայելու համար:

Իր բնույթով հետաքրքիր է 1937թ. նոյեմբերի 17-ին Մելիքլարի գյուղխորհրդի տված տեղեկանքը, որը ներկայացնում ենք առանց փոփոխությունների:

Տեղեկանք

Տրվում է սույն տեղեկանքը Մելիքլար գյուղի բնակիչ Տեղ-Հովհաննես Մակարի Տեղ-Հարությունյանին վրդ մինչեւ այժմ քահանա է եւ 1918-20թթ. խմբապետ, ակտիվ կերպով մասնակցել է քաղաքական պատերազմներին, պայքարել է բոլշեւիկների դեմ. մինչ այժմ կուլակային տնտեսություն ունի, 1929թ. ՇԱՐՈՒՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՃ 8

Համայնքները խոշորացնելուց առաջ կառավարությունը պետք է հարցնի բնակչության կարծիքը



Փարամազի հուշարձանը Մեղրիում

Վարչապետի համարին ՍԿԻՔԸ ԷՋ 2

համաձայն՝ ցանցը 100 տոկոսով կբարեփոխվի, իսկ գումարի չափը պայմանավորված է աշխատանքային ծավալով: Կմաքվեն եւ կանցնեն լիարժեք շահագործման նաեւ քաղաքի 3 ջրամբարները: Նախատեսվածի համաձայն՝ կվերականգնվի նաեւ աշխատանքների ընթացքում քանդված ասֆալտապատ տարածքը: Հավանաբար խմելու ջրատար ցանցի վերափոխման աշխատանքների ընթացքում դուրս բերված խողովակներով քաղաքապետարանը կփոխի նաեւ ոռոգման ջրատար համակարգը: Աշխատանքները իրականացվում են Մեղրու «ՃՇՇԶ» ՍՊ ընկերության կողմից, իսկ եթե հաշվի առնենք տնօրեն Ազատ Գասպարյանի՝ աշխատանքի հանդեպ ունեցած բարձր պատասխանատվությունը, ապա որակն ապահովված է:

– **Ինչպե՞ս լուծվեց Մեղրու ներքին ջրատար ցանցի՝ համայնքային սեփականություն դարձնելու կամ «Հայքընդկողնի» ՓԲ ընկերությանը հանձնելու վիճահարույց հարցը:**

– Բանակցություններից եւ «Հայքընդկողնի» ընկերության հետ փոխհամաձայնության գալուց հետո նպատակահարմար գտանք եւս 15 տարով պայմանագիր կնքել ընկերության հետ: Պայմանագիրը, որը պետք է կնքվեր «Հայքընդկողնի» ՓԲ-ի հետ 35 տարով, բարոյական չէի կարող համարել, քանի որ գալիք սերունդների փոխարեն ես իրավունք չունեմ պայմանագիր կնքել:

– **Մեղրի գետի հունին միջամտելու հետ կապված նախագծային աշխատանքներն ի՞նչ փուլում են:**

– Մեղրի գետի այն հատվածում, որ հոսում է անմիջապես Մեղրի քաղաքի վարչական տարածքով, ներկայումս ոչ մի աշխատանք չի տարվում:

– **Հնարավոր չէ՞ արդյոք կասեցնել ծրագրի իրագործումը, քանի որ բնակչության մեծ մասը, դատելով**

Մեղրու տարիներին գրված դիմումներից, դեմ է այդ ծրագրին:

– Կան ծրագրեր, որոնք կյանքի կոչվելով այնքան էլ չեն ոգեւորում, գուցե սա էլ նմանատիպ մի ծրագիր է: Տարբեր կարծիքներ են հնչում, ամեն դեպքում այն կասեցնելու ուղղությամբ մեր կողմից որոշակի աշխատանքներ են տարվում:

– **Բազմիցս տարբեր ատյաններում ահազանգել են Մեղրու առջեւ ծառացած բնապահպանական խնդիրների մասին: Ինչպե՞ս եք գնահատում Մեղրու բնապահպանական վիճակը:**

– Ես այն կարծիքին եմ, որ շրջանում հանքարդյունաբերական ձեռնարկություն հիմնադրելու օրվանից Մեղրին ունի բնապահպանական լուրջ խնդիրներ, բայց մյուս կողմից էլ այն մեղրեցուն աշխատանքով ապահովող հիմնական ուղորդն է: Նոր հանքավայրեր շահագործելուց զուգահեռ այդ խնդիրներն ավելի են սրվում:

– **Հատկապես ո՞ր կազմակերպությունների հետ եք առավել շատ համագործակցում:**

– «Քարո» (Գյուղատնտեսության եւ գյուղի զարգացման հիմնադրամ) կազմակերպության աջակցությամբ գյուղատնտեսության ոլորտում կատարել ենք մի շարք ներդրումներ: «Քաունթերփարթ» ինթերնեյշնլ կազմակերպության հետ սերտ հարաբերություններ ենք հաստատել, որի աջակցությամբ վերջերս վերանորոգեցինք Մեղրու երաժշտական դպրոցը: Համայնքի զարգացման գործում մեծ է «Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության ներդրումը: Ներկայումս նախատեսում ենք ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության ենթակայության Մեղրու հիվանդանոցի նախկին շենքի տարածքը դարձնել բնակելի թաղամաս՝ 34-36 ընտանիքի ապահովելով բնակարանով: Պետք է նշեն, սակայն, որ առանց շենքի պատկանելության հարցի լուծման սկսել ենք նախագծային աշխատանքները: 15 մլն դրամ

տրամադրել է ՁՊՄԿ-ն, նախատեսվում է վերանորոգել շենքի տանիքը, պատշգամբներ ավելացնել, մի խոսքով՝ ամեն հնարավորն անել բնակարանային պայմաններին հարմարեցնելու համար: Շենքն ամենայն կահածնվի 2014թ. վերջին, իսկ բնակարանները կվաճառվեն շուկայական գներից 3-4 անգամ ավելի էժան:

– **Ինչպե՞ս են ընթանում Մեղրու հիվանդանոցի նոր շենքի կառուցման աշխատանքները:**

– Այդ առումով պատկերն այնքան էլ ոգեւորիչ չէ, քանի որ աշխատանքներն ընթանում են նախատեսվածից ավելի դանդաղ, չնայած շենքը պիտի շահագործման հանձնվի 2015թ. կեսերին:

– **Առանձնացրեք, խնդրեմ, Մեղրու առջեւ ծառացած կարևորագույն խնդիրներից մի քանիսը:**

– Քաղաքի համար կարևորագույն խնդիր էր խմելու ջրի ներքին ցանցի փոփոխումը, որ, ինչպես արդեն նշեցի, ընթացքի մեջ է: Այժմ առաջնային է հիվանդանոցի շենքի կառուցման, քաղաքի բնակիչների զագամատակարարման հարցը, որը, իմ ունեցած տեղեկություններով, 2015թ. պիտի լուծում ստանա: Իմ կարծիքով՝ քաղաքի զագամատակարարման հարցում նախագծային աշխատանքները պիտի ավարտված լինեն: Առաջնային խնդիրներից է նաեւ մշակույթի կենտրոնի վերանորոգումը:

– **Ի՞նչ կասեք ՏԻՄ օրենքի մասին, այն ազատ գործունեություն ծավալելու հնարավորություն տալի՞ս է, եւ առհասարակ ի՞նչ խանգարող հանգամանքների եք բախվում:**

– Կարծում եմ, եթե ՏԻՄ օրենքին լիարժեք տիրապետես, որեւէ խնդիր չի առաջանա: Թերեւս պետք է նշեն, որ ամենախանգարող հանգամանքներից մեկն ավելորդ թղթաբանությունն է: Ես այն կարծիքին եմ, որ շատ հարցեր կարելի է բանավոր լուծել:

– **Համայնքային բյուջեով հնարավոր է գլոբալ հարցեր լուծել:**

– Ցավալի է, բայց կարելի է ասել, որ բյուջեն երբեմն միայն աշխատավարձ տալու չի բավականացնում: Հիմնականում համայնքային հարցերը լուծում ենք տարբեր ծրագրերի ներդրումներով: Բացի դրանից՝ սեփական եկամուտներն ավելացնելու համար քաղաքում վաճառելու համար թեկուզ մեկ քառակուսի մետր ազատ տարածք չունենք: ՁՊՄԿ-ի կողմից վարչական ծախսերի համար տրամադրված 30 մլն դրամ գումարից այս տարի տնտեսել ենք 10 մլն դրամ՝ շինարարական աշխատանքներ կատարելու նպատակով: Հույս ունեմ, որ հաջորդ տարի նույնպես որոշակի գումար խնայելով՝ հնարավոր կլինի որեւէ գլոբալ հարց լուծել:

– **Մեղրին մեր հանրապետության համար դարպաս է եւ ունի մեծ նշանակություն: Հետաքրքիր է՝ սահմանամերձ լինելն ինչ-որ առումով առավելություն տալի՞ս է:**

– Հատուկ մշակված ծրագիր եւ դիրքորոշում Մեղրու՝ որպես սահմանամերձ տարածաշրջանի, նկատմամբ չկա: Մեղրեցին, լինելով սահմանային բնակիչ, ոչ մի առավելություն դեռեւս չունի: Մինչ քաղաքապետ դառնալս մտածում էի Մեղրիում ազատ տնտեսական գոտի ստեղծել, ներկայումս, կարծես թե ինքս էլ եմ հասկանում, որ դա իրականություն դարձնելը շատ դժվար կլինի: Միաժամանակ Մեղրին դարձել է մի համայնք, որտեղ բնակիչները յուրաքանչյուր հարցի տալիս են միասնական լուծում: Ինձ ոգեւորում է այն փաստը, որ հատկապես համայնքի զարգացմանն առնչվող հարցերին մեղրեցիները միասնական են մտնում: Դրա վկայությունը Փարամազի արձանի շրջակա տարածքի բարեկարգման, կանաչապատման աշխատանքներն են, որոնք մեկ մասից ավելի պիտի տեսնին, բայց ժողովրդի աջակցության շնորհիվ ընդամենը մեկ օրում ավարտվեցին: Իմ կարծիքով, եթե մարդիկ տեսնում են հետեւողական աշխատանք, ապա արդյունքն ակնհայտ է լինում:

– **Գրե՞ք երկու տարի է՝ համայնքի ղեկավար եք, կարելի է ասել, որ լիովին տիրապետում եք իրավիճակին: Աշխատելիս հիմնականում ի՞նչ խնդիրների եք հանդիպում:**

– Աշխատանքի ընթացքում, բնական է, որ շատ խնդիրներ են առաջանում, բայց պետք է անկեղծորեն խոստովանեն, որ ժողովուրդն ի սկզբանե կանգնեց իմ թիկունքին: Մեղրեցիների, հատկապես երիտասարդների աջակցությունը չթողեց, որ աշխատանքում զգամ իմ անփորձությունը: Իմ կայացման գործում կարեւոր էր նաեւ այն, որ առաջին օրվանից շրջապատվել եմ փորձառու մարդկանցով, եւ հիմա վստահաբար կարող եմ ասել, որ իմ ընտրվելն ինքնանպատակ չէր: Ես գնացի ժողովրդի մոտ, այլ ոչ թե ժողովուրդը եկավ, եւ համարձակվում եմ ասել, որ Մեղրու քաղաքապետարանում ներկայումս աշխատում է 3000 մարդ: Ժողովրդի հետ համագործակցելու, նրանց կարծիքը հաշվի առնելու, առաջացած խնդիրներին միասնական լուծում տալու շնորհիվ իմ գործունեության ընթացքում ծագած խնդիրներն ավելի հեշտ լուծելի են թվում: Քաղաքի լուսավորությունն ու մաքրությունը գերազանց մակարդակի վրա են, վերելակներն անփափան են աշխատում, իսկ եղանակի տաքանալուն զուգահեռ ջրցան մեքենաները կանցնեն աշխատանքի: Ե՛հ ի՜նչ է, մանկապարտեզում էական շինարարական աշխատանքներ չենք կատարել, բայց ջերմոցման հարցի լուծման եւ ներքին որոշակի աշխատանքների շնորհիվ այս տարի սաների թիվը զգալիորեն ավելացել է: Մի խոսքով՝ համայնքային հնչեղության հարցերն իմ եւ ժողովրդի ջանքերով աստիճանաբար լուծում են ստանում:

Հարցազրույցը՝ ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Ի՞նչ է կախարվում Քաջարանի կոմբինատում

Վեռնահայասան

ՍԿԻՔԸ ԷՋ 1

սավորները, որպես կանոն, չեն խոսում արտառոց այդ նահանգի մասին: Այնտեղ խոսելն առհասարակ արգելված է: Իսկ ժամանակ առ ժամանակ կոմբինատից ստացվող կցկտուր տեղեկությունների համաձայն՝ նման հետընթացի պատճառը գունավոր մետաղների միջազգային շուկայում գների պերմանենտ նվազումն է:

Ամենամակերեսային դիտարկումները, սակայն, վկայում են, որ գների նվազումը չէր կարող նման նահանգի պատճառ դառնալ: Եթե իրոք գունավոր մետաղների գներն այդքան իջել են, ապա ինչո՞ւ, օրինակ, «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲԸ-ում այդ նույն ժամանակահատվածում նահանգը (վճարվող հարկերի գծով) չնչին է: Ինչո՞ւ Ազարակի կոմբինատում նվազած ժամանակաշրջանում նույնիսկ փոքր-ինչ ավելացել է վճարվող հարկերի չափը:

Կապանի եւ Ազարակի կոմբինատների ցուցանիշները վկայում են, որ գունավոր մետաղների գների շուկայում վայրկյաններ են եկան ազդեցություն չէին կարող ունենալ պետությանը վճարվող հարկերի ծավալների վրա:

Եվ ուրեմն՝ ինչպե՞ս է ստացվել, որ Քաջարանի կոմբինատն ընթացիկ տարվա առաջին եռամսյակում (2012թ. նույն ժամանակի համեմատությամբ) կիսով չափ պակաս է հարկեր վճարել պետությանը:

Ստեղծված իրավիճակում մի քանի հանգամանք չեն կարող չզարմացնել անգամ ոչ մասնագետներին:

Նախ՝ արտառոց այդ իրողության մասին ոչ ոք չի խոսում, ոչ ոք տագնապ չի հնչեցնում, ոչ ոք պարզաբանում է ի տալիս: Ի վերջո խոսքն այնպիսի գունարների մասին է, որոնք էական նշանակություն ունեն Հայաստանի պետական բյուջեի համար:

Երկրորդ՝ Մաքսիմ Հակոբյանը վերջին մեկ տարում քանիցս հայտարարել է, որ հանքարդյունահանման ծավալներն անընդհատ աճում են իրենց մոտ: Եթե իսկապես այդպես է, ապա ինչո՞ւ է պետությունը դրանից միայն տուժում է:

Երրորդ՝ «արբանյակ ձեռնարկությունների» զգալի մասն այլեւս նախկին չափով ՁՊՄԿ-ից պատվերներ չի ստանում, ինչի արդյունքում եւ աշխատատեղեր են կրճատվում, եւ այդ ընկերությունների աշխատակիցների միջին աշխատավարձն է նվազում:

Չորրորդ՝ այս հետընթացի պայմաններում, մինչդեռ, դրամաշրջանառությունն աճում է ՁՊՄԿ-ից ամբողջապես սնվող եւ Մաքսիմ Հակոբյանի ընտանիքին պատկանող ՍՊ ընկերություններում՝ «Ձանգեզուր մայինգ», «Լամաքս գրուպ»...

Մի դիտարկում էլ՝ կոմբինատում եւ կոմբինատի շուրջ բացասական այդ միտումներն ակնհայտ դարձան եւ խորացան այն բանից հետո, երբ անցյալ տարվա հուլիսին Մաքսիմ Հակոբյանն իր տնօրինության տակ վերցրեց նաեւ Սյունիքի մարզպետի աթոռը: Եվ դրանից հետո կոմբինատում կատարվեցին առեղծվածային ստուգումներ, որոնց արդյունքում ուղղակի ցնցվեց կոմբինատի տնտեսությունը:

Ի՞նչ է կատարվում «Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունում: ՍԱՍԿԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Անթեղած կրակներ

Լույս է տեսել Ապերնակ Գրիգորյանի բանաստեղծությունների ժողովածուն

ԴՐԱՏԱՆՔԻ ՓՈՐՁ

«Ուշուշ են գալիս», բայց ծնվում են բանաստեղծները, ծնվում են չակնկալելով, որ իրոք իրենք ծնվել են կարեւոր հանձնարարականով, ծնվել են արարելով ու ժողովրդի հոգու դռները բացելու առաքելությամբ՝ սփոփելու եւ սփոփվելու, կրակվելու եւ կրակ կտրելու համար, որպեսզի ապրեցնեն մարդկային կարեւոր հոգիները: Ասես երկնայինի մատը խառն է եղել նման ծնունդների համար ու տվել է իր բարեգութ աստվածաշնորհ օրհնությունը, որպեսզի փոքրիշատե հաստատի աշխարհի հավասարակշռությունը՝ ներկայացնելու երկիրը իր հրապույրներով ու թովչալից գրավչությամբ:

Ծնվել են մարդկային հակոտնյա հարաբերությունների միջեւ կանաչ օազիսներ բացելու ու ծաղկաբույրների խնկարկունով բուրյան դարձնելու տեսանելի աշխարհը՝ ավերված, քանիցս ասպատակված, մոխիրների կույտերից երկնած երկիր հայրենին՝ այդ հարազատ ու սրբատուրք մշտարը: Եվ երեւի հենց դրա համար էլ Այունյաց աշխարհի հզոր անհատականությունների կողքին ծլահանել ու հասակ է առել Ջանգեզուր աշխարհի մեր օրերի քնարերգուն: Նրան նկատել են գուսան Աշոտը եւ Սերո Խանգաղյանը, Սուրեն Այվազյանը եւ վաղամեռիկ Ալբերտ Իսաջանյանը:

Իհարկե, այդ անվանիները փափուկ բարձր չեն դրել նրա անութների տակ, բայց ողջունել են նրա մուտքը եւ քաջալերել բորբոքելու հոգու կրակներն ու նոր հնարներով մտրացնելու հայ պոեզիան:

Բանաստեղծը չէր պարզվեց նոր որակներով, նոր հանդերձներով չգուզեց իր նորելուկներին, այլ հարազատ մնաց ավանդական՝ դասական ձևերին, ու իր նորամուծությունների նորաթուր քեչտերը մերվեցին դասականին ու մնացին նրա շրջանակներում:


Ծնվեցին հոգեպարար երգերը՝ սարյանական արտասովոր գույներով ու ակսեսյան նվագների զրնգուն հնչեղությամբ: Նա հասարակ դիտորդը չէր հայրենի գեղահիաց բնության՝ նրա երկնածն լեռների, շարվեշարան ձգված ցից-ցից ժայռեղեն բուրգերի ապշահար հովերը:

Հայրենի բնությունը բանաստեղծի ներշնչարանն է, ինքն այդ բնության մի փոքրիկ մասնիկն ու նվագարանը՝ բնությունն իր մեջ առած, ինքը՝ բնության գրկում:

Առանց տարակուսելու կարելի է ասել, որ բնությունն իր բնորոշ է, անվարձ բնորոշ իր անմեկնելի ներդաշնակությամբ ու հմայքով:

Ցուրտ-ցուրտ աղբյուրների զորընդեղ ջրերից է վերցնում ավիշն իր կենսության, որից սնունդ է առնում, որից ծնունդ է առնում մորմոքված խոնը, սրդողած տողը ու մեկնում Հայոց աշխարհի հմայիչ մեղեդիները:

Նա Այունյաց աշխարհի նորոյա սրնգահարն է իր նուրբ ու քնքուշ, թովիչ նվագներով, որոնք երբեմն ելելուց են բարձր տոնայնությամբ եւ թվում է, թե փոխվում են նվագարաններն, ու ձայներն են փոխվում, որոնք մերթ առնում են շեփորի ձայնային հուժկու թափը, մերթ դառնում



Ապերնակ Գրիգորյան

Ծնվել է 1935թ. փետրվարի 14-ին Այունիքի մարզի Գորիս քաղաքում՝ Տեղ գյուղից Գորիսում բնակություն հաստատած Արշակ եւ Վարդանուշ Գրիգորյանների ընտանիքում (Գյարուն Արշակ Բաղունց մշտավոր տոհմից): 1943-1944 ուստարում ընդունվել է Գորիսի 7-ամյա դպրոցը: Ավարտելուց հետո ուսումը շարունակել է Գորիսի N2, ապա՝ N1 միջնակարգ դպրոցում: 1955-56 ուստարում ավարտել է Ակսել

Բակունցի անվան միջնակարգ դպրոցը: 1957-1960թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1962թ. վերադարձել է հայրենիք եւ աշխատանքի անցել Տաթևիկի շինարարությունում նախ որպես ձեւավորող նկարիչ, ապա՝ շինմուտաշինի տեղամասում՝ մոնտաժող փականագործ Ակներ-Շինուհայր-հազարկապ ջրատար գծի վրա: Նույն թվականին ընդունվել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի եւ գրականության հեռակա բաժինը: 1966թ. գործուղվել է Գորիսի շրջանի Հալիձոր գյուղ՝ որպես հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ՝ մինչեւ 1969թ.:

Համալսարանն ավարտելուց հետո՝ 1970-2005թթ., աշխատել է Գորիսի N3 միջնակարգ դպրոցում:

Գրել սկսել է մանկուց, ասել է թե՛ դպրոցական տարիներից: Սուղ ժամանակը եւ գավառական կյանքը խլել են նրա մտքի շողարձակումները: Բայց եւ այնպես գտել է իրեն, ստեղծել իր գեղարվեստական աշխարհը՝ կայունացնելով ասելու ձևի իր հարեթականը, հարազատ մնալով չափածո խոսքի դասական ձևերին: «Դասական ձևերով պիտի բերես քո նորոյթը», - ասում է հեղինակը:

Տպագրվել է հանրապետական «Գրական թերթում», «Ջանգեզուրում», «Այունիք» մարզային պարբերականում, «Այունյաց աշխարհ», «Բանբեր Գորիսի», «Այունյաց երկիր», «Գրական Այունիք» եւ «Համայնք» պարբերականներում ու հրապարակված «Ստեղծագործում է Գորիսը» հավաքածուում, «Գորիսապատումի» առաջին հատորում: Ապերնակ Գրիգորյանը վերագտել է իրեն ու իր առաջին ժողովածուով ներկայանում է ընթերցող հասարակությանը:

զրնգուն ծնծղա ու զանգակ-զանգակ զրնգալով թեւաբախում են ու հասնում իր «...սպուպապերի լքված ու անտերունջ տափերին, ուր դեռ իր մեծ տատի աղոթքների նուրբ ու սրտաճնկիկ մրմունջն է լսվում»: «Դերասան են» բանաստեղծության մեջ այսպես է խորհում բանաստեղծը...

Բնության երեսույթի ու տարերքի տեսաժապավենն իրեն բնորոշ ձևերով է տեսնում, որոնք վեր են ասվում շքեղ պատկերների հեղեղի՝ հարափոփոխ գույներ ստանում, որ մնում են զմայլված հնարանքի վարպետությամբ («Վերիուշ», «Մայրամուտ», «Ձնհալ»): «Ջանգեզուրյան տեղատարափ...»:

Հայրենի եզերքի ամեն քար ու գուղձը մարդկային հատկանիշներ են ստանում ու ասես դիմաճանությամբ քեզ հետ խոսք են բացում մարդկային լեզվով: Բանաստեղծը շատ նուրբ ձևով է տեսնում ու տնտղում բնության մեջ կատարվող հարաշարժ ընթացքը, որը մի չնչին բանից փոխվում է ու ծավալվում՝ եւ աչքերը ծնվելով ավետում բնության արթնացումը («Լուսաբաց»...):

Թվում է, թե շունչն իրեն պահած՝ ունկը գետնին արած բանաստեղծը զգում է հողի շնչառությունն ու սրտի տրոփը, ահա թե որտեղ է թաքնված

նրա արարման հանելուկը: Բնությունը մարդկային հարաբերությունները վեր հանելու միջոց է, որի գույներով շղարշվում, սքողում է ճշացող հակասություններն ու բացահայտում մարդկային անցանկալի արարքներն ու անհանգիստ պահանջում մաքրվել ու ձերբազատվել մեղքերից:

Շրջափայց բանաստեղծի գրչի տակ կյանք են առել պոեզիայի բոլոր մոտիվները՝ սիրո եւ անուրջի, բնության անզուգական զարթոնքի, հայրենիքի, սիրո ու հավերժի, տարագրության ու կարոտի, ընդվզման ու մորմոքի նվագները:

Ցավով մղկտում է կորուստների համար ու սփոփանքի հնարներ որոնում՝ տանելու դառնահեծ վշտերն ու հոգեկան ծանր ավարտները:

Երբեմն մղկեզան լափու է տալիս ահադողող գետերի պես, շառաչում ջրվեժների նման ու ընդոստ ցցցվելով ծառս լինում եւ գահավիժելով զարնվում պնդաճակատ որձաքարե-

Լուսաբաց

*Բազկապարած ժայռածերպի
Երկինքն ավլող ծառին թառած
Քնաթաթախ բուն ծղրտաց...
Ծառը դժգոհ, ծուլ ծկզաց,
Արնարները երակ-երակ կծիկ փվին,
Իսկ հիմնախախար ժայռը դողաց
Ու ստկունով իրեն ցնցեց...
Ժայռապղրից մի բար թուսլ,
Վրնջացող նծույզի պես,
Գիշերվա մութը սողցեց...
Իրակ փռչին երկինք առավ,
Անրեք մի շուն խոլ կրակեց...
Բուր մաքրեց սրնգախար սքաղաղը,
Օղբ ձեռքեց եւ զիլ ձայնով այնպես
կանչեց,
Որ վեր ելան մարդիկ բնար,
Չէ որ փիրուզ երկինքն արդեն
Լեղակ-լեղակ սքեկ էր թարթել,
Լուսաբաց էր...
1974թ.*

Խոսք հրաժեշտի

*Նորից զեզուն, զեզուն, զեզուն է զի,
Չանգը դարանոցի ու կաճառի,
Ելելուց մեղուշ, երկար ու ձիգ,
Ինչպես ցայգալույսին սուրբ փաճարի
Չանգերն են զեզուն՝ հանց ավերիս,
Որպես սքաղախակ՝ երսզ ու երզ՝
Մեր գրչության այրի ու արարման
Ավերմանը օձման ոսկեհանդերձ:
Նորից զեզուն, զեզուն, զեզուն է զի,
Չանգը եւ գորավոր, եւ ապավեն,
Որ ողեկցի երթը մեր լուսածիլ,
Ոգեկոչի, ձգվի ու փանի վեր,
Դեպի մեր ինքնուրջան նոր ողեկի՝
Պարմաններին հայոց՝ մեր ցնձախներ,
Եվ դուստրերին նազուկ ու գեղաչվի:
Նորից զեզուն, զեզուն, զեզուն է զի,
Եվ հարնում է ասես ազդարարում,
Որ կերտներ դարձան ու սրբագիր,
Ու գրչության լույսը՝ հույսի բարոս
Ալեկոծել է ձեր շինջ հոգին՝
Վառել ինքնուրջան՝ հուրանը խարոյկ,
Սուրբ մյուտուկի պես հար ասմբիջ:
Նորից զեզուն, զեզուն, զեզուն է զի,
Չանգը հույզի, հույսի, հրաժեշտի,
Որ ձեր ողիկ լինի՝ վառ, լուսածիլ,
Ելելուց զեզուն հար հավերժի,
Ձեռի կապույտի մեջ՝ լազվաղու ու բի,
Տանի կապարները ձեր բաղձալի՝
Սուրբ արարիչը ձեզ ողեկից...
25.05.1999.*

Ձորերս գևամ

*Ելնեմ կարտրի ձորերս գևամ,
Ձորերս գևամ ձորերի միջով,
Ծաղկանց ծիծաղի թովթով արբենամ,
Փարվեմ հովերիս սարերից իջնող:
Ճապուկ կամուսնով իջնեմ ձորն ի վար,
Փեշերս առած հովի թեւերին,
Ձորերս մնան ապշած, հոգեվար՝
Ունկերը պահած ծախ ու ծիվերին:
Որք կամուսնով իջնեմ գիսահակ
Ու հասնեմ փամուկ ձորաբերանին,
Ձոր առնեմ պարսկ շուրթերիս ծարավ
Ու փամ շինողաց հազար երակի:
Կամարների փակ՝ հուշաղբյուրի մութ,
Իմ գողպրիկ, համեսք սեղանը բանամ,
Մեծ վարպետների պարվին հոգեթով
Կենացը խնեմ, զժվեմ, ինեթանամ:
Ելնեմ կարտրի խորերս գևամ,
Անցնեմ ձորերիս մազե կամրջով,
Կարտրս առնեմ, հուշերս մնան
Ու կարտրաբաղձ ձորում անրջեն:
2007թ. ապրիլ*

րին, փշուր-փշուր լինում, ցալքուն տալիս ու արծաթ-արծաթ գրնգալով հայտնվում փրփրաբաշ հորձանուտում, որտեղից էլ կերկեր լսվում է նրա նվաղած աղաչական հառաչը («Ձնհալ»):

Անընդմեջ գույներ են ու գունալին պատկերներ՝ բնորոշ մակդիրներով ու համեմատություններով լեցուն, որոնք, միմյանց միահյուսվելով, դառնում են խոսուն ու հիացական կտավներ:

Հայրենի եզերքն է՝ իր քարեղեն բարձրություններով, թավալուր իջվածքներով եւ անդնդախոր կիրճերով, պանդխտված հայրենին է կապատածիր հեռուներում՝ կարոտաբաղձ ու տարագիր եւ ցավով է հնչում մորմոքված կարոտի աղերսը:

*...Տեկնեքս աշխարհի արևածոր մի
հովիս՝
Նշտարված, խարիված, կրակված
ու ավեր,
Ծնունդս գոյաձեն, պանդխտված
հայրենիս
Անհարևում երազանք, հավերժի
գոյարև...*

Կարոտի ցավը նոր ակոսներ է բացում, կորուստի ցավը ճնշում է բանաստեղծի զգայուն հոգին՝ տակնուվրա անում, որից մղկտում է ներհուն սիրտը՝ ակնկալելով հայրենի եզերքի ավերվող տեղաշարժերը:

*... Լեռան փեշերից լորերս թուսլ,
Ձորերս նորից մնացին թափուր,
Ասես բներից հեթերս ելան՝
Նուշերս թողած բներում փափուկ...
(«Լորերս բռան»)*

Եվ այս ահավոր ծանրությունը բանաստեղծը ներառում է իր մեջ ու անկկատ ու ճկուն փոխաբերություններով վերագրում հայրենի եզերքի բնության հավերժին՝ ծառին ու թփին, ծղին ու ծաղկին ու բացահայտում մարդկային խղճի անողորմ հանարբերությունը:

Հնարներ որոնելու վարպետ է, որի համար տեսակավորել եւ ստեղծել է իր ոգեղեն բառատաղձը, որոնք լի են հնչեղությամբ, մերթիք երաժշտականությամբ ու ալիտերացիայով:

Ինքն իրեն չի ստիպում գունեղություն տալու բանաստեղծությանը, դրանք ինքնաբերական են, որոնք միս ու արյուն են դարձել դեռես պատանեկան տարիներից, որոնք հարստանալով դարձել են Հայոց աշխարհի ու հայրենի եզերքի արարչության բացահայտման քնարահույզ ելելուցներն ու ինքնատիպ նվագները:

Մի քանի գրքեր ծաված խոռվա-հույզ բանաստեղծն իրեն զգացնել տալու փորձեր էլ արել, մեկուսացած իր ներաշխարհի մեջ արարել ու արարում է առ այսօր:

Տպագրելու փորձերն իրենը չեն ու մտքով անգամ չի էլ անցել բախելու գորղների միության դռները, չնայած ճանաչում է բոլոր արժանավորներին, իսկ նրանցից շատերն էլ՝ իրեն: Ափսոսում ես, որ ուշադրությունից դուրս են մնացել նրա հոգու բոցկտուն ճառագներն, ու պատանեկան ակունքներում մոխրաթաթախ մխում են հոգեքամ «Անթեղած կրակները», որոնք իրոք արժեքներ են ու վաղուց պիտի դառնային հայ պոեզիայի բաղադրիչ մասն ու ժողովրդի հոգեւոր սեփականությունը:

Ես խորամուկս չեմ եղել արժեւորելու նորամուտ ժողովածուն եւ վեր հանելու այն ոսկեհատը, որ բերում է հեղինակը հայ ընթերցողին, այլ որոշակի կտրաբաղձներով փորձել եմ հրամցնել սուկ մասնակի փշրանքներ ու բարի երթ ցանկանալ «Անթեղած կրակներին», որ կյանք մտնեն ու կրակ կտրած ջերմացնեն հարազատ ժողովրդի ցրտահար ու փշաքաղ հոգիները եւ գոհացնեն երկրպագուների երկար սպասումների անձուկ կարոտը:

Շահան Գրիգորյան

Փառասոն



Իսկ մարզի գյուղացիները փարիներ շարունակ չեն կարողանում իրացնել կուրական թուրդը

Անցած դարի 70-ականներին տողերիս հեղինակը դեպի Տաթև է ուղեկցել ֆրանսահայ բանաստեղծ, Ֆրանսիայի գիտությունների ակադեմիայի անդամ Ռուբեն Մելիքին: Տաթևից վերադառնալու ճանապարհին շրջանի ղեկավարներն ի պատիվ մեր մեծ հայրենակցի Հալիծորի անտառում ծոխ սեղան էին բացել՝ մեր հող ու ջրի առատ, համ ու հոտով բարիքներով: Նրան հատկապես դուր էր եկել Որոտանի խորոված կարմրախայտը, Հալիծորի կարմիր գինին: Բանաստեղծի կողմից գինու գովասանքը լսելուց հետո երջանկահիշատակ Սաշիկ Հարությունյանը, ով այն ժամանակ Հալիծորի պետական տնտեսության տնօրենն էր, ծոցագրպանից հանեց բառածալ մի թուրք ու մեկնեց բանաստեղծին: Նա զարմացած վերցրեց այն ու սկսեց բացել: Բազում անգամ ծալվել-բացվելուց թուրքը համարյա չորս կտորի էր բաժանվել: Հեռվից նկատելի էր ոսկետառ տեքստը: Բանաստեղծը հայերեն դժվարությամբ էր խոսում, բայց ի զարմանս մեզ՝ հընթացս թարգմանեց: Վկայագիր էր՝ 1913 թվականին Փարիզում անցկացված գինիների մրցույթի մասին: Այն ի լուր աշխարհի հայտնում էր, որ գեղեցկության, մոդայի, սիրո, ոգելիչ խմիչքների համաշխարհային մայրաքաղաքում անցկացված մրցույթում Հալիծոր փոքրիկ գյուղից ուղարկված գինին շահել է գլխավոր մրցանակը:

Չեմ ցանկանում ծավալվել: Բանաստեղծը տասնյակ անգամ լուսանկարեց վկայագիրը, իսկ մենք այնքան էինք ոգեւորվել, որ կարծես մեր պապերի արածի մեջ ներդրում ունենք:

Փռք ու պատիվ մեր սերնդին, որ կարողացավ բազում արհավիրքների դիմակայել: Այսօր էլ խաղողի այր տեսակն էնդեմիկ է ոչ միայն Հա-



յաստանում, այլ նաև մեր տարածաշրջանում: Իսկ հիմա բուն ասելիքի մասին: Սայիսի 3-ին նախածեռնող, հայրենասեր մարդկանց, կազմակերպությունների շնորհիվ սովորականից մարդաշատ էր «Տաթևեր» ճոպանուղու Հալիծորի տեղամասի



տարածքը: Տոնական տրամադրությունը համակում է մարդկանց արդեն գլխավոր մայրուղու ու Տաթևի խաչմերուկից: Ճամփեզրի գովազդային վահանակները հիշեցնում են առջեւում սպասվող հաճելի հանդիպման մասին: Իսկ այստեղ, ինչպես ասում են, ասեղ գցելու տեղ չկա. Որոտանի կիրճի ութ համայնքի ներկայացուցիչներին միացել են հարյուրավոր հյուրեր մարզի մեծ ու փոքր համայնքներից, մայրաքաղաքից: Բազմաթիվ են օտարերկրացի հյուրերը: Եկել են աշխարհի չորս ծագերից, եկել են տեսնելու մեր մարդկանց աշխատանքը, համտեսելու նրանց, նաև բնության ստեղծած բարիքները, որ հետո զնամ ու իրենց երկրներում պատմեն այն հրաշքի մասին, որ կրում է Հայաստան անունը:

Տարածքի ութ համայնքի նախածեռնող բնակիչներն առատ սեղաներ են բացել: Կերակրատեսակների մեծ մասը նույնիսկ տեղյակներիս շատերի համար է եկզոտիկ. կաթնով է, թանապուր՝ խնցու թանով ու նաև չորաթանով, փլավ, խնցու կարագ՝ դեռ թանի կաթիլներով թաթախված: Սեղաններին հատուկ շուք են տալիս անտառի բարիքները՝ չոր հաղարջ, սեզն, սալոր, քոլի տանձի չիր, մոշի, վայրի մորու մուրաբաներ, հյութեր....

Տեղացիները ցուցադրել էին նաև իրենց ծեռքի աշխատանքները, որոնք առնչվում էին գյուղի, մասնավորապես ոչխարաբուծության հետ. տարբեր տեսակի բրդյա գուլպաներ, գործվածքներ, թելեր են այլն: Հյուրերը հատկապես երկար էին կանգնում կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամի տաղավարի մոտ:

Առաջ անցնելով ասենք, որ

պես են խրթխրթուն ծիծեռնակաթե մկրատները: Ու նորից մրցակիցների հետոցը խլանում է երկրպագուների խրախուսող աղմուկի մեջ: Առաջինը բրդից ու ոտքերի կապից ազատված ոտքի է ցատկում Տաթևի համայնքի ներկայացուցիչ Բորիս Քոլյանի ոչխարը՝ ութ ռուպեց քիչ ավելի ժամանակ անց: Երկրորդը Ռաֆիկ Խաչատրյանն է՝ Հալիծորից, 9 ռուպե 5 վայրկյան, իսկ երրորդը՝ Հրանտ Գալստյանը՝ 9 ռուպե 25 վայրկյան: Հաղթողը պարզետարովեց գլխավոր մրցանակով եւ ոսկե մկրատով:

Մնում է ավելացնել, որ այդ հրաշալի միջոցառումը կազմակերպել էր «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ն Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության աջակցությամբ ու ֆինանսավորմամբ: Իսկ նպատակն էր՝ նպաստել Գորիսի եւ Սիսիանի շրջաններում անասնապահության ոլորտի զարգացմանը եւ ծրագրում ընդգրկված գյուղական համայնքների բնակչության եկամուտների աճին: Ծրագրի երրորդ փուլը ներառում է Սիսիանի եւ Գորիսի 40 թիրախային գյուղական համայնք՝ 30,000 ընդհանուր բնակչությամբ:

Դրա եւ կազմակերպված լավ միջոցառման համար շնորհակալություն հայտնելով կազմակերպիչներին, ավելացնենք, որ մարզի (եւ ոչ միայն մարզի) հարյուրավոր ֆերմերներ տասնյակ տարիներ չեն կարողանում ամենաչնչին գնով անգամ իրացնել կուրական տոննաներով բուրդը: Երբեմն այն ուղակի ոչնչացնում են: Իսկ համաշխարհային շուկայում 1կգ բուրդն արժե 6-12 ԱՄՆ դոլար:

Կնպաստի՞ արդյոք այդ փառատոնը ոչխարաբուծության



ստեղծվում էր տպավորություն, որ կազմակերպվածը ոչ թե ցուցահանդես-վաճառք է, այլ ցուցահանդես-հյուրասիրություն: Ասում են լավը մոռացված հինը վերհիշելն է:

Ավագները լավ են հիշում, որ խորհրդային տարիներին պարբերաբար կազմակերպվում էին կթի, ոչխարի խուզի մրցումներ: Այս միջոցառման ծրագրի շրջանակներում ոչխարի խուզի մրցումներին մասնակցում էին Հալիծորի, Խոտի եւ Տաթևի համայնքների ներկայացուցիչները: Մինչեւ մրցումների սկիզբը հարյուրավոր երկրպագուների ուրախ գոռում-գոչյունների, ծափերի տակ տեղացի ոչխարաբուծներից ոչխարի խուզի վարպետության դաս է առնում Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնը: Հետո լսվում է մրցավարի հետհաշվարկի ծայրը՝ երեք, երկու, մեկ, եւ մրցումները սկսված են: Մի պահ լուրջություն է տիրում: Լսվում է, թե ինչ-

զարգացմանը, բրդի իրացմանը, թե՛...

Չնայած ամբոխի առաջացրած ժխորին, Որոտանի կիրճում ամեն ինչ ընթանում էր իր հունով. այստեղ տեր ու տնօրեն էր ամենակարող արեւը: Այն լցվել էր ծորը, սիրահարվել ջրերին: Ջրերն այդ սիրուց խենթացած մշուշի ձեւով քսվելով քարափի ծառերին, թփերին, ապաստան էին փնտրում անտառի ստվերներում:

Հեռու-հեռվում՝ Գյազբելի ծյուր-նածածկ գագաթից ցած, նրա լանջին է փարվել ծյան մնամ ճերմակ մի մեծ ամպակտոր: Երեւի երեկ է բարձրացել ծորից: Հենց որ այն ամբողջովին ծածկի Գյազբելի գագաթը՝ անձրեւ կգա: Իսկ մայիսի անձրեւն առատ բերքի նշան է:

Սպասենք աշնան առատ բերքին...

ՌԵԴԿԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԷՋԵՐ ԱՅՈՒՆԻԵԻ ՊԱՏԱՌԻԹՅՈՒՆԻՑ

Չայ առաքելական եկեղեցու բռնադատված հոգեւորականները 1930-38թթ.

ըստ ՊԱԿ-ի փաստաթղթերի

ՍԿԻՋԸ ԵՏ 4

ապակուլակացման է ենթարկված եղել, 1918 մինչ 29թ. ունեցել է բարտակ, շահագործել է, 1929թ. կոլխոզի կազմակերպման ժամանակ պայքարել է կոլխոզի դեմ եւ Յանատարածի ժամանակ քաղաքատարկեալ. Յակոբ Գրիգորյանի եւ կազմակերպել է կոլտնտեսությունը քայքայել: 1930թ., վորպես քաղաքատարկյալ, աքսորված է եղել մինչեւ 1935թ.:

1925թ. մասսային կազմակերպել է Հարեան կռիվներին դուրս եկել, եւ խփել են մեկ մարդ եւ 3 հատ ոչխար են սպանել: Ստորագրություն

1937 թվականի դեկտեմբերի 2-ին ՀԽՍՀ ՆԳԿ «Եռյակի» կողմից դատապարտվել է 10 տարվա ազատազրկման:

Մահացել է կալանման վայրերում 1943թ. մայիսի 22-ին սրտի սուր անբավարարվածությամբ:

Քրեական գործը կարճվել է 1959թ. սեպտեմբերի 26-ին ՀԽՍՀ Գերագույն դատարանի կողմից հանցակազմի բացակայության պատճառով:

Արդարացվել է 1989թ. դեկտեմբերի 30-ին ՀԽՍՀ ԳԽ Նախագահության հրամանագրով: ՀՀ ԱԱ արխիվ ԿԳՖ գ.6435 գ.11959

Տեր-Խաչատուր Տեր-Պողոսի Տեր-Գրիգորյան, ծնվ. 1862թ., գ. Մեղրիում, քահանա, ցածրագույն կրթությամբ, 1898թ.-ից 1924թ. եղել է քահանա, ներկայումս հողագործ, ամուսնացած է, ունի 5 երեխա, բնակվում է գ. Մեղրիում: Չերբակավել է 1929թ. սեպտեմբերի 27-ին:

Մեղադրական եզրակացությունում նշվում է, որ մեղադրվում են 3 մարդ ընդհատակյա դաշնակցական կազմակերպությունում ակտիվ գործելու մեջ:

1. Տեր-Խաչատուր Տեր-Պողոսի Տեր-Գրիգորյանը 1905թ. ղվ անդամ է, ընդհատակյա կազմակերպության աշխատանքներին մասնակցում է 1926 թվից...

Մեղադրվում է «Դաշնակցություն» կուսակցության ընդհատակյա աշխատանքներին մասնակցելու եւ հակախորհրդային գրակա-

նություն պահելու եւ տարածելու մեջ: 1930թ. հունվարի 6-ին Հայաստանի ՊԶ-ին կից Հատուկ խորհրդակցությունը նրան դատապարտեց 3 տարվա աքսորի Սիբիր:

1930թ. մարտի 3-ին Համ. ՊԶ կոլեգիային կից Հատուկ խորհրդակցությունը հաստատեց 3 տարվա ազատազրկումը, բայց աքսորի վայրը դարձրեց Միջին Ասիան: Արդարացման մասին տվյալներ չկան: **ՀՀ ԱԱ արխիվ ԿԳՖ գ. 9250**

Տեր-Յովհաննես քահանա Տեր-Հարությունյան
Տեր-Վահան քահանա Տեր Ասատրյան
Գործով անցնում են Ջանգեզուրի շրջանի մի մեծ խումբ անձինք, որոնց ձերբակալել էին 1930թ.: Հիմնական մեղադրանքը դաշնակցական գործունեությունն էր: Նրանց մեջ էին նաեւ երեք քահանաներ:

Տեր-Հարություն Ծերունի Տեր-Վարդանյան, ծնվ. 1870թ., 60 տ. ՀԽՍՀ քաղաքացի, ծագումով գյուղացի, կուլակ-ձայնագրուկ, միջնակարգ կրթությամբ, ամուսնացած է, ունի 5 երեխա, քահանա-տերտեր: Բնակվել է Ջանգեզուրի շրջանի Բազարչայ գյուղում: Չերբակավել է 1930թ. հունիսի 18-ին:

Մեղադրական եզրակացություն
Տեր-Վարդանյան Տեր-Հարություն Ծերունի-Բազարչայ գյուղի բնակիչ, նույն գյուղի դաշ-խմբակի ակտիվ անդամ, մասնակցել է փետրվարյան արկածախնդրությանը, կուլակ-ձայնագրուկ, քահանա, ներկա է եղել Բազարչայ գյուղի դաշնակների բոլոր ընդհատակյա ժողովներին, գյուղացիների շրջանում տարածել է սադրիչ լուրեր, մեծ ազդեցություն ունի գյուղում: Մթերքներ է մատակարարել բանդիտներին: Կոլեկտիվացման ժամանակ քայքայիչ աշխատանք է տարել (հարցաքննության ժամանակ լրիվ չխոստովանեց եւ իրեն մեղավոր ճանաչեց): 1930թ. օգոստոսի 30-ին Հայաստանի ՊԶ-ի կոլեգիայի կողմից դատապարտվել է 10 տարվա ազատազրկման համակենտրոնացման ճամբարում, ինչն անհոփոխ է մնացել Անդր. ՊԶ-ի կոլեգիայի 1930թ. դեկտեմբերի 4-ի եւ ԳԶԿ կոլեգիայի 1930թ. հունիսի 27-ի որոշումներով:

1936թ. ժամանակից շուտ ազատել են, իսկ 1937թ. գնդակահարել: Արդարացվել է 1991թ. ապրիլի 30-ին ՀԽՍՀ ԳԽ Նախագահության հրամանագրով:

Տեր Յովհաննես Մակարի Տեր-Հարությունյան, 52 տարեկան, ծագումով գյուղացի, Մալիբար գյուղի բնակիչ, քահանա, ձայնագրուկ, ամուսնացած է. Չերբակավել է 1930թ. հունիսի 17-ին:

Մեղադրական եզրակացություն
Տեր-Հարությունյան - ամուսնացած, գյուղ Մալիբար, նույն գյուղի դաշ-խմբի կազմակերպիչ եւ ղեկավար, ձայնագրուկ, քահանա, 1928թ. կապված է եղել Ղարաբաղի թեւանի

հետ, կապված է եղել նաեւ բանդիտ Կարդաշանի եւ ուրիշների հետ, նրանց մատակարարել է փամփուշտներ: Քննության նյութերով հաստատվում է, որ նրա մոտ կա մեկ գնդացի, մեծ թվով հրացաններ եւ փամփուշտներ, ռայց նա կատեգորիկ ձեռով մերժում է, չնայած մի շարք վկաների ցուցմունքներին: Կապված է եղել նաեւ Դ/Կ կազմակերպության Գերյուսի եւ Սիսիանի շրջանի դաշնակ ակտիվիստների հետ, մեծ ազդեցության ունի գյուղացիության շրջանում, ակտիվ պրովակատոր է եւ խորհրդ. իշխանության բացահայտ թշնամի:

Հարցաքննության ընթացքում կատեգորիկ կերպով հերքել է վերոշարադրածը եւ իրեն մեղավոր չճանաչեց:

1930թ. օգոստոսի 31-ին Հայաստանի ՊԶ կոլեգիան հետեյալ որոշումը կայացրեց. «Տեր-Հարությունյանի նկատմամբ նյութն առանձնացնել եւ վերաքննել»:

Այլ տվյալներ նրա մասին այս գործում չկան (տես. գ. հ. 6435, 11959-Ա. Մ.):

Տեր-Վահան Տեր-Ասատուրի Տեր-Ասատրյան, 56 տարեկան, ապրում է Ջանգեզուրի շրջ. Լժեն գյուղում, քահանա, ծագումով գյուղացի, միջակ-ձայնագրուկ, կիսագրագետ, ամուսնացած է, ունի 2 երեխա. Չերբակավել է 1930թ. հունիսի 28-ին:

Մեղադրական եզրակացություն
Տեր-Ասատրյանը ձերբակալվել է զինաթափման ժամանակ, որպես պատանդ: Ունեցել է հրացան եւ մատուցել, որոնք զինաթափման ընթացքում չի հանձնել:

Քննության միջոցով հաստատվել է հրացանի տեղը եւ բռնագրավվել, իսկ մատուցելը մնացել է իր մոտ: Կապված է եղել դաշնակների հետ, ինչպես նաեւ նրան հայտնի է եղել Դաշ. կուս. թաղային բյուրոյի գոյության մասին...

1930թ. օգոստոսի 30-ին Հայաստանի ՊԶ կոլեգիայի դատական խորհրդակցությունը դատապարտել է նրան 3 տարվա ազատազրկման համակենտրոնացման ճամբարում:

1930թ. դեկտեմբերի 4-ին Անդ. ՊԶ-ի կոլեգիան պատիժը թողել է նույնը, սակայն 1931թ. ապրիլի 3-ին ՀՀ ՊԶ-ի կոլեգիան դատապարտեց գնդակահարության: Արդարացվել է 1991թ. փետրվարի 28-ին ՀԽՍՀ ԳԽ Նախագահության հրամանագրով: **ՀՀ ԱԱ արխիվ ԿԳՖ գ. 10682**

Տեր-Արսեն քահանա Տեր-Պետրոսյան
Տեր-Արսեն Տեր-Գրիգորի Տեր-Պետրոսյան, ծնվ. 1873թ. Գորիսի շրջանի Տաթև գյուղում, հողագործ, մենատնտես, նախկին քահանա, կուլակ-ձայնագրուկ, գրագետ, ամուսնացած է, ունի 5 երեխա, բնակվում է Տաթև գյուղում: Չերբակավել է 1938 թ. փետրվարի 14-ին: Ինչպես երևում է գործում գտնվող 1938թ. փետրվարի 18-ի հարցաքննության արձանագրությունից Տեր-Արսեն Տեր-Պետրոսյանը 1904թ. ընդունել է հոգևոր կոչում ձեռնադրվելով քահանա: Իր կոչումից հրաժարվել է ձերբակալությունից մի քանի տարի առաջ: Ներկայացնեք Հայաստանի Հանրապե-

տության Դատախազության, Պետանվտանգության մարմիններում քննության վրա հսկող բաժնի 1991թ. ապրիլի 30-ի կազմած փաստաթուղթը՝

ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ Տեր-Արսեն Տեր-Գրիգորի Տեր-Պետրոսյանի նկատմամբ
Քաղ. Տեր-Արսեն Տեր-Գրիգորի Տեր-Պետրոսյանը - 1873 թ-ի ծնված, Գորիսի շրջանի Տաթև գյուղում, անկուսակցական, գրագետ, քահանա, բնակվել է Տաթև գյուղում: ՀԽՍՀ ՆԳԿ կողմից 1938թ. փետրվարի 14-ին կալանավորվել է ՀԽՍՀ Պետանվտանգության մարմինների կողմից մեղադրական եզրակացությամբ մեղադրվել է այն բանի համար, որ հանդիսանալով դաշնակցական կազմ. անդամ, ակտիվ մասնակցություն է ունեցել ադրբեջանցիների կոտորածին, 1918-21թ. քաղաքացիական կռիվներում պայքարել է բուլշեիկների դեմ:

Արխիվային գործում Տեր-Պետրոսյանի նկատմամբ չկա դատավճիռ կամ արդարադատական մարմնի որոշում նրան դատապարտելու մասին: Գործում եղած 07. 06. 1956թ.-ի տեղեկանքից (գ. թ. 34) երևում է, որ նա ՀԽՍՀ ՆԳԿ կից նախկին «Եռյակի» 1938թ. մարտի 2-ի որոշմամբ դատապարտվել է պատժի առավելագույն չափի գնդակահարության:

Ներկայացված հիշյալ մեղադրանքը գործով չի հիմնավորվել եւ նա բռնադատվել է անհիմն, որի համար էլ նրա նկատմամբ պետք է կիրառել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի Նախագահության 1989 թ. հունվարի 16-ի «30-40-ական թվականների եւ 50-ական թվականների սկզբներին ռեպրեսիայի զոհերի նկատմամբ արդարությունը վերականգնելու լրացուցիչ միջոցառումների մասին» հրամանագրի 1-ին հոդվածը եւ նրան ենթարկել ռեպրիլիտացիայի-արդարացման:

ՀՀ ԱԱ արխիվ ԿԳՖ գ.11412

Տեր-Գրիգոր քահանա Տեր-Գրիգորյան
Տեր-Գրիգոր Յովհաննեսի Տեր-Գրիգորյան, 53 տարեկան, ապրում է Ջանգեզուրի Մազրա գյուղում, ամուսնացած է, գրագետ, հոգեւորական.

Մեղադրանք է հարուցվել Ջանգեզուրի շրջանի բնակիչների վրա, որպես դաշնակցական ընդհատակյա կազմակերպության անդամների, որոնց բոլորին դատապարտել են տարբեր պատիժների: Տեր-Գրիգորյանի վրա առանձին տվյալներ գրեթե չկան, ուստի սահմանափակվենք 1926թ. հունիսի 26-ի Հայաստանի ՀԽՍՀ ՄՀ Հատուկ խորհրդակցության Արձանագրության հ. 3-ից քաղվածքով, որտեղ նշվում է, որ Տեր-Գրիգոր Տեր-Գրիգորյանը, որը ձերբակալվել է հունվարի 5-ին, ընդհատակյա դաշնակցական կազմակերպության ակնանվոր անդամ, դատապարտվել է 5 տարվա աքսորի ՌԽՍՀ-ի քաղաքներից մեկը:

1994 թ. հունիսի 6-ին արդարացվել է ՀԽՍՀ ԳԽ Նախագահության հրամանագրով:

ՀՀ ԱԱ արխիվ, ԿԳՖ 13129 հատ. 1

Այունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝ **ՍՄՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

ՀԻՆՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՄԱՐԱԿԻՉ «ԱՅՈՒՆԻՑԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32: Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02: Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: հսկողության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:

Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

© Երկրի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 պաշտպանական մամուլ: Տպագրմանը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 12.05.2014թ.:

Սյունիքը 1-ին աշխարհամարտում.

1914-1918ԹԹ.

1-ԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՁՈՂՎԱԾ ԵՎ ԱՆՅԵՏ ԿՈՐԱԾ ԱՅՈՒՆԵՑԻՆԵՐԸ /ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ/

ՍԿԻՋԸՆ՝ N 9 (317)

ՃԱԿԱՏԵՆ		
1.	Դավթյան Դավիթ Սարգսի	1914
2.	Արզումանյան Աթանես Ավետիքի	1914
3.	Ղարախանյան Խորեն Գրիգորի	1914
4.	Մարտիրոսյան Առաքել Սիմոնի	1914
5.	Սիմոնյան Գարեգին Ավագեմի	1916
6.	Ավագյան Աղալով Բալասանի	1915
7.	Գրիգորյան Սիխայել Հարությունի	1914
8.	Դավթյան Գաբրիել Համբարձումի	1916

9.	Թունանյան Գրիգոր Ասատուրի	1914
10.	Սարուխանյան Եփրեմ Գեւորգի	1915
11.	Սարգիսյան Գարեգին Հարությունի	1915
12.	Սկրտունյան Սանթրուր Պողոսի	1915

Վ.ԽՈՏԱՆԱՆ		
1.	Գեւորգյան Տիգրան Հարությունի	1916
2.	Մովսեսյան Հարություն	1916
3.	Բաղդասարյան Պողոս Հայրապետի	1915
4.	Բաղդասարյան Մեսրոպ Հայրապետի	1915
5.	Հայրապետյան Խուրշուդ	1916
6.	Դավթյան Թադեոս Սիմոնի	1915
7.	Բաբայան Մաթեոս Սկրտիչի	1916
8.	Գրիգորյան Հարություն Գրիգորի	1915
9.	Աղաջանյան Դուկաս Աղաջանի	1915
10.	Մաթեոսյան Աղա Մաթեոսի	1916
11.	Հայրապետյան Բեգլար Ակոփի	1916
12.	Աղաջանյան Բեգլար Աղաջանի	1918
13.	Բաղդազուլյան Երեն Գրիգորի	1920
14.	Անտոնյան Գերասիմ Ստեփանի	1918
15.	Բալասանյան Սարգիս Օհանջանի	1919

16.	Աղաջանյան Ավետիս Աղաջանի	1919
17.	Բալասանյան Գրիգոր Հարությունի	1917
18.	Ղազարյան Ավագ Սկրտիչի	1920
19.	Ղազարյան Հարություն Սկրտիչի	1922
20.	Գրիգորյան Աղալով Խաչատուրի	1922
21.	Բալասանյան Բալասան Ավետիսի	1922

ՇԻԿԱՅՈՂ		
1.	Մարտիրոսյան Համբարձում Ալեքսանի	1921
2.	Հարությունյան Հայրապետ Մեսրոպի	1921
3.	Հովսեփյան Համբարձում Առաքելի	1921
4.	Մարտիրոսյան Ներսես Մարգարի	1917
5.	Ամիրջանյան Ստեփան Խաչատուրի	1921
6.	Ավանեսյան Հարություն Սարգիսի	1914
7.	Դավթյան Նիկոլայ Մարտիրոսի	1917
8.	Մարտիրոսյան Արսեն Ալեքսանի	1917
9.	Սարգսյան Դադաշ Արզումանի	1914
10.	Սարգսյան Խոսրով Արզումանի	1918
11.	Մելքունյան Հարություն Սիմոնի	1916
12.	Սկրտչյան Ամբատ Սիմոնի	1914